



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## ՀՐԱՄԱՆ

No 26- Ն

«19»07.2022թ.

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0923.02.5 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ»  
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0923.02.01.5 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊՈՍԱՐԿՈՂ » ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի N 1165-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաև «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով՝

### ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման պետական կրթական չափորոշիչը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել «Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական աշխատող» որակավորման պետական կրթական չափորոշիչը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2016 թվականի նոյմբերի 14-ի N 1165-Ն հրամանը:
3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանին:

Invalid signature

X

ԱՐԱՅԻԿ ԽՉՄԱԼՅԱՆ

Signed by: KHZMALYAN ARAYIK 3101800129

ԱՐԱՅԻԿ ԽՉՄԱԼՅԱՆ

/Պարտականությունները կատարող/

**ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0923.02.5 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ»**  
**ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0923.02.01.5 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**  
**ՊԵՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ**  
**ԳԼՈՒԽ 1.**

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. Սույն չափորոշիչը սահմանում է միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության՝ ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 31-ի թիվ 332-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության որակավորումների ազգային շրջանակի 5-րդ մակարդակի 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորմանը (հետևյալ որակավորումներին) ներկայացվող պահանջները, հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնը, ուսանողների ուսումնական բեռնվածության նվազագույն և առավելագույն ծավալները:
2. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել ուսուցման հետևյալ ձևերով՝
  - 1) առկա,
  - 2) հեռակա,
  - 3) դրսեկության (էքստեռն),
  - 4) հեռավար (դիստանցիոն):
3. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագրի իրականացման համար սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.
  - 1) կրթության առկա ձևով.
    - ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 2 տարի,
    - բ. հիմնական կրթության հիմքով՝ 3 տարի,
  - 2) կրթության հեռակա ձևով.
    - ա. միջնակարգ կրթության հիմքով՝ 3 տարի,

3) դրսեկության (էքստեննատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերով կրթության հիմքը և ուսուցման տևողությունը որոշում է ուսումնական հաստատությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի սեպտեմբերի 6-ի N 1028-Ն որոշման:

4. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 2736 ժամ է, առավելագույն ծավալը՝ 4428 ժամ: Հիմնական կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

## **ԳԼՈՒԽ 2.**

### **ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0923.02.5 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0923.02.01.5 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

5. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման մասնագետի մասնագիտական գործունեության բնութագիրը տրվում է ըստ զբաղմունքների տեսակների և մասնագիտական պարտականությունների:

6. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորմամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքը՝

1) սոցիալական սպասարկող:

7. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտությամբ 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորմամբ մասնագետի մասնագիտական պարտականություններն են.

1) հայտնաբերել սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց և ուղղորդել՝ ըստ գնահատված կարիքի, ստանալու համապատասխան ծառայություններ,

2) մասնակցել սոցիալ-վարչարարական գործառույթների իրականացմանը,

3) տրամադրել տեղեկատվություն և խորհրդատվություն սոցիալական պաշտպանության ծրագրերի և ծառայությունների վերաբերյալ,

4) աջակցել անձի (ընտանիքի) սոցիալական աջակցության իրավունքի իրացմանը,

5) մասնակցել սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց համար ծրագրերի իրականացման և խնամքի կազմակերպման գործընթացներին,

- 6) նպաստել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց հասարակական կյանքի բոլոր բնագավառներում հավասար հնարավորությունների ստեղծանը, նրանց սոցիալական հմտությունների վերականգնմանը և սոցիալական ներառմանը,
- 7) մասնակցել դեպքի վարմանը և բազմամասնագիտական թիմի քննարկումներին, ներկայացնել սոցիալական աջակցության կարիք ունեցող անձի (ընտանիքի, այլ սոցիալական խմբի) խնդիրները,
- 8) փնտրել և հավաքել տեղեկություններ համայնքների տեղական սոցիալական ծրագրերի և այլ ռեսուրսների վերաբերյալ, և աջակցության կարիք ունեցող անձանց (ընտանիքի, այլ սոցիալական խմբի) նպատակաուղղել՝ ըստ գնահատված կարիքի,
- 9) մասնակցել սոցիալական պաշտպանության ծրագրերի և ծառայությունների մշտադիտարկմանը:

### **ԳԼՈՒԽ 3.**

#### **ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0923.02.5 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0923.02.01.5 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ» ՈՐԱԿՎՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

8. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագրի նկատմամբ ընդհանուր պահանջները սահմանվում են շրջանավարտին ներկայացվող ընդհանուր պահանջների համաձայն:
9. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է՝
  - 1) ունենա մասնագիտական գործունեության տվյալ բնագավառում իր մասնագիտական դերին անհրաժեշտ կարողությունները ձևավորելու համար պահանջվող տեսական ու գործնական գիտելիքներ,
  - 2) դրսևորի աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում գործընկերների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողություն,
  - 3) ունենա որոշակի փոփոխվող իրավիճակներում առաջացած խնդիրներին մասնագիտական տիպային և այլընտրանքային լուծումներ առաջարկելու կարողություն,
  - 4) դրսևորի մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը համադրելու և ամբողջության մեջ դիտարկելու, ինչպես նաև քաղաքացիական գիտակցություն ցուցաբերելու կարողություն,

- 5) ունենա մասնագիտական գործունեության գործառույթները սահմանված նորմերին համապատասխան իրականացնելու հմտություններ,
- 6) ցուցաբերի իր և աշխատակիցների (առկայության դեպքում) մասնագիտական կարիքները գնահատելու և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու կարողություն,
- 7) ունենա մասնագիտական կարողությունների պարբերաբար կատարելագործման ձգտում և ինքնուսուցման կարողություն,
- 8) ցուցաբերի մասնագիտական և ընդհանուր բնույթի անհրաժեշտ տեղեկատվություն փնտրելու, դրանցից օգտվելու և դրանք նպատակային օգտագործելու կամ փոխանցելու կարողություն,
- 9) ունենա աշխատակիցների (առկայության դեպքում) աշխատանքները կազմակերպելու կամ գործընկերային հարաբերությունները (լիազորության դեպքում) ըստ կարողությունների և մասնագիտացման համակարգելու հմտություններ,
- 10) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերի ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողություն:

#### ԳԼՈՒԽ 4.

### **0923.02.5 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0923.02.01.5 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

10. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջները սահմանվում են ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների, առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական կարողությունների բնագավառում շրջանավարտին ներկայացվող պահանջների համաձայն:
11. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում պետք է՝
  - 1) իմանա ՀՀ Սահմանադրության, սոցիալական ապահովության ոլորտը կարգավորող հիմնական նորմատիվ իրավական ակտերի, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի հիմնական դրույթները,
  - 2) տիրապետի հայոց լեզվին,
  - 3) հաղորդակցվի առնվազն երկու օտար լեզուներով,
  - 4) տիրապետի առողջ կենսակերպ վարելու, հիգիենայի և ֆիզիկական կուլտուրայի կանոններին,
  - 5) գիտելիքներ ունենա ազգային և համաաշխարհային պատմության և մշակույթի վերաբերյալ,

6) ունենա անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների վերաբերյալ ընդհանուր տեղեկություններ,

7) ցուցաբերի կիրառական տնտեսագիտության հիմնադրույթների, մասնագիտական գործունեության բնագավառի տնտեսական երևույթների և հարաբերությունների առանձնահատկությունների, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքների, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունների իմացություն:

8) իմանա էկոլոգիական հիմնական հասկացությունների բովանդակությունը, բնապահպանական գլոբալ և տարածաշրջանային հիմնախնդիրների դրույթները,

9) պատկերացում ունենա արտակարգ իրավիճակների մասին, տիրապետի արտակարգ իրավիճակներում գործելու հիմնական սկզբունքներին և մոտեցումներին, տեղյակ լինի փրկարարական աշխատանքների կազմակերպման կառուցվածքին և ձևերին, օգտագործի անհատական պաշտպանության միջոցներ:

12. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 1-ում բերված մոդուլներով սահմանված առանցքային հմտություններին:

13. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագրով շրջանավարտը պետք է տիրապետի աղյուսակ 2-ում բերված մոդուլներով ըստ մասնագիտացումների սահմանված ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողություններին:

## **ԳԼՈՒԽ 5.**

### **ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0923.02.5 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ»**

#### **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0923.02.01.5 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**

#### **ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՀԱՆՋՆԵՐ**

14. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագիրը րականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնական պարապմունքներ վարող դասախոսը պետք է ունենա դասընթացի բնույթին համապատասխանող միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում կամ տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշխատանքային գործունեության փորձ, եթե տվյալ դասընթացի ուղղությամբ միջին կամ բարձրագույն կրթություն Հայաստանի Հանրապետությունում չի

իրականացվում: Հատուկ մասնագիտական դասընթացները վարող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է,

2) ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը պետք է ունենա տվյալ մասնագիտությամբ մասնագիտական աշխատանքի փորձ և մասնագիտական կրթություն,

3) արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

15. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) հաստատությունը պետք է ունենա մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների ծրագրային բովանդակությանը համապատասխանող ուսումնական, մեթոդական և տեղեկատվական նյութեր (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա և այլն), գնահատման և ատեստավորման նպատակով օգտագործվող նյութեր, ուսումնական գործընթացի արդյունավետ իրականացմանը նպաստող այլ նյութեր, ուղեցույցեր:

16. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ պահանջները սահմանվում են ըստ ուսումնական կաբինետների, լաբորատորիաների, արհեստանոցների, սպորտային համալիրի: Դրանց հագեցվածությունը որոշվում է ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքների,

բ. օտար լեզվի,

գ. ընդհանուր հումանիտար առարկաների,

դ. սոցիալական աշխատանքի կազմակերպման,

ե. անվտանգության և առաջին օգնության:

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

ա. համակարգչային:

3) Սպորտային համալիր՝

ա. մարզադահլիճ,

բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող հաստատությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

17. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք»

մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական

ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) առկա ուսուցման ձևի համար ուսումնական տարվա սկիզբը սեպտեմբերի 1-ն է, իսկ հեռակա,

դրսեկության (էքստեռնատ) և հեռավար (դիստանցիոն) ձևերի համար սահմանվում է ուսումնական պլաններով,

2) ուսումնական յուրաքանչյուր տարվա տևողությունը սահմանվում է ուսումնական պլանով,

3) ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանձանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները,

4) ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն և պարտադիր պարապմունքների շաբաթական ծավալը չպետք է գերազանցի 36 ժամը՝ առանց նախասիրական առարկաների, խորհրդատվությունների և լրացուցիչ արտալսարանային պարապմունքների բեռնվածության,

5) հեռակա ուսուցման ձևի դեպքում ուսանողների հետ պարտադիր պարապմունքների տարեկան ծավալը առնվազն 160 ժամ է,

6) ուսումնական խմբի համար խորհրդատվության տարեկան ծավալը կազմում է մինչև 100 ժամ,

7) նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է՝ հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

18. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը ներառում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաներ,

2) պրակտիկայի յուրաքանչյուր տեսակի տևողությունը, սույն չափորոշչով սահմանված պրակտիկայի ընդհանուր տևողությանը համապատասխան, սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով,

3) պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում է ուսումնական հաստատությունը,

4) ուսումնական պրակտիկաներն անցկացվում են պրակտիկայի ծրագրի կատարման ապահովելու համար բավարար կահավորում և տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական արհեստանոցներում, ուսումնափորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնաօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև կազմակերպություններում, հաստատություններում համապատասխան որակավորում ունեցող մասնագետների կողմից:

5) արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման ուսանողների ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) ուսումնառության ընթացքում բոլոր ուսանողները պարբերաբար ատեստավորվում են, որի նպատակը, ըստ սույն չափորոշչով սահմանված կարողությունների տարրերի, նրանց ձեռքբերումները հավաստող վկայություններ ստանալն է,



- 2) ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ժամկետների, անցկացման ձևի և ներառվող նյութի ծավալի մասին,
- 3) պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով,
- 4) պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա ստուգել շրջանավարտի մասնագիտական կարողությունների և հմտությունների համապատասխանությունը սույն չափորոշչով 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման մասնագետի համար սահմանված պահանջներին:

## **ԳԼՈՒԽ 6.**

### **ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 0923.02.5 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ 0923.02.01.5 «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՂ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՄՈԴՈՒԼԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ**

20. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու համար հաստատությունը կազմում և հաստատում է առանցքային հմտությունների, ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների, ընտրովի դասընթացի ուսումնական ծրագրերը, կրթության կառավարման պետական լիազորված մարմնի երաշխավորած ձևին համապատասխան ուսումնական պլանը՝ հաշվի առնելով 3-րդ աղյուսակում բերված օրինակելի ուսումնական պլանը:

21. Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագիրն իրականացնող հաստատությունը սույն չափորոշչի հիման վրա մոդուլային ուսումնական ծրագրերը և ուսումնական պլանը կազմելու ժամանակ՝

- 1) կարող է փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը՝ պահպանելով մասնագետի (շրջանավարտի) կարողություններին և հմտություններին ներկայացվող պահանջները,
- 2) պետք է մոդուլների արդյունքներին և դրանց կատարման չափանիշներին համապատասխան ուսումնական ծրագրերը մշակելիս հաշվի առնի գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,
- 3) պետք է առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշի տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,
- 4) պետք է միջանկյալ ատեստավորման ընդհանուր շաբաթների սահմաններում որոշի ըստ կիսամյակների այս ատեստավորմանը հատկացվող ժամանակը,

- 5) պետք է մասնագիտության նկարագրին համապատասխան տվյալ որակավորման ամբողջացման անհրաժեշտությունը և առանձնահատկությունը հաշվի առնելով՝ կազմի և հաստատի ընտրովի դասընթացների ուսումնական ծրագրերը,
- 6) օգտվելով երաշխավորված ձևում տրված պարզաբանումներից՝ պետք է կազմի ուսումնական պլանի կիրառման պարզաբանումները,
- 7) պետք է պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշի ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,
- 8) պետք է սույն չափորոշյով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերին համապատասխան՝ ընտրի ամփոփիչ ատեստավորման ձևը:

**Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագրի առանցքային հմտությունների մոդուլներ**

<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ»</b>		
<b>1.</b>	<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-Հ-5-22-001
<b>2.</b>	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է զարգացնել ուսանողի անձնական շփման ունակությունները, ակտիվացնել միջանձնային հաղորդակցության հնարավորությունները, ձևավորել աշխատանքային և մասնագիտական գործունեության ընթացքում նպատակային հաղորդակցման, գործնական կապերի ու հարաբերությունների ստեղծման կարողությունը:
<b>3.</b>	<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
<b>4.</b>	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>5.</b>	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>6.</b>	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հաղորդակցության դերն ու նշանակությունը անձնական և մասնագիտական նպատակների իրականացման համար
<b>7.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է բացատրում հաղորդակցման անհրաժեշտությունը անձի ինքնադրսևորման և գործարար հաջողությունների համար, 2) ներկայացնում է շփման և անձնական հաղորդակցման ձևերը, բաղադրիչները, 3) ներկայացնում է գործնական հաղորդակցման եղանակները, բաղադրիչները, 4) շփման հնարավորությունը ուղղորդում է նպատակային հաղորդակցմանը, 5) անձնական հատկանիշները օգտագործում է գործնական հաղորդակցության մեջ:
<b>8.</b>	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կիրառել ուղղակի հաղորդակցման ձևերը
<b>9.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում ուղղակի հաղորդակցման ձևերը,

		<p>2) բանավոր հաղորդակցման ժամանակ վարում է զրույց, արձագանքում է հարցադրումներին,</p> <p>3) հանդես է գալիս հաղորդումներով և զեկույցներով՝ ներկայացնում է հստակ և նպատակային խոսք,</p> <p>4) ուղղակի հաղորդակցման ընթացքում հայտնում է տեսակետ, դրսևորում է հետաքրքրություններ, հաճոյախոսում է,</p> <p>5) մասնակցում է դեբատների և բանավեճերի, պահպանում է համագործակցության շարունակականությունը:</p>
<b>10.</b>	<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կիրառել անուղղակի հաղորդակցման ձևերը
<b>11.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում անուղղակի հաղորդակցման ձևերը,</p> <p>2) կազմում և ձևակերպում է գրավոր խոսք՝ պահպանելով նպատակայնությունն ու էթիկան,</p> <p>3) օգտագործում է տեղեկատվական տեխնոլոգիաները և այլ տեխնիկական միջոցները՝ նպատակային տեղեկատվությունը փոխանցելու համար,</p> <p>4) կազմում է գրություններ՝ ըստ հասցեատիրոջ և նպատակի,</p> <p>5) վարում է տեղեկատվության հավաքագրման և փոխանցման փաստաթղթեր,</p> <p>6) բանավոր հաղորդակցման նյութը փոխարկում է գրավորի,</p> <p>7) գրավոր հաղորդակցման նյութը փոխարկում է բանավոր հակիրճ նյութի:</p>
<b>12.</b>	<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ձևավորել և զարգացնել միջանձնային հաղորդակցում
<b>13.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) նախաձեռնում է անձնական և աշխատանքային շփում՝ ըստ իրավիճակի և զրուցակցի կամ հասցեատիրոջ,</p> <p>2) ստանում, մշակում և դասակարգում է անհրաժեշտ (նպատակային) տեղեկատվությունը,</p> <p>3) առկա տեղեկատվությունն օգտագործում է միջանձնային հաղորդակցում ձևավորելու համար,</p> <p>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</p> <p>5) ներգրավվում է երկխոսություններում, քննարկումներում, հայտնում է կարծիք, հիմնավորում է տեսակետներ,</p> <p>6) պահպանում և եզրափակում է երկխոսությունը,</p> <p>7) կարողանում է հաղորդակցվել՝ հաշվի առնելով իրավիճակը և ունկնդրի հետաքրքրությունները:</p>

14.	<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Խթանել համագործակցության ձևավորումը, ստեղծել նախապայմաններ շարունակական գործընկերության համար
15.	<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է համագործակցությանը խթանող միջոցառումները (գովազդ, հայտարարություններ, ցուցահանդեսներ և այլն),</li> <li>2) հավանական գործընկերոջ վերաբերյալ հավաքագրում է անհրաժեշտ տեղեկատվությունը,</li> <li>3) հավաքագրված տեղեկատվությունն օգտագործում է գործարար հաղորդակցում ձևավորելու համար,</li> <li>4) օգտագործում է հաղորդակցման հնարքները և տեխնոլոգիաները՝ հետաքրքրություն առաջացնելու և շահադրդելու համար,</li> <li>5) հաղորդակցման ընթացքում ձեռք է բերում վստահություն,</li> <li>6) ապահովում է հետադարձ կապի միջոցառումներ:</li> </ol>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»</b>		
16.	<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ԱԱՕ-5-22-001
17.	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները պահպանելու, սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան կենցաղը և աշխատանքը կազմակերպելու, հավանական վտանգները և վթարները կանխարգելելու, արտադրական վթարների դեպքում՝ անվտանգության միջոցառումներ իրականացնելու և առաջին օգնություն ցուցաբերելու կարողություններ:
18.	<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
19.	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
20.	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
21.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել աշխատանքային գործունեության ընթացքում և կենցաղում անվտանգության կանոնները
22.	<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է բացատրում անվտանգության կանոնների սահմանման, իրավական կարգավորման և պահպանման անհրաժեշտությունը,</li> <li>2) ըստ հիմնական բնագավառների ճիշտ է ներկայացնում անվտանգության կանոնների</li> </ol>

		<p>պահանջները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները,</p> <p>4) ճիշտ է ներկայացնում հրդեհային անվտանգության և հակահրդեհային պաշտպանության կանոնները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները,</p> <p>6) ներկայացնում է անվտանգության կանոնների խախտման հետևանքները, պատասխանատվությունները:</p>
<b>23.</b>	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կազմակերպել կենցաղը և աշխատանքը սանիտարահիգիենիկ պահանջներին համապատասխան
<b>24.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում է մարդու առողջության և աշխատանքի ընթացքում աշխատունակության վրա ազդող գործոնները (սանիտարահիգիենիկ, հոգեբանաֆիզիոլոգիական, էսթետիկական, սոցիալական-հոգեբանական),</p> <p>2) ներկայացնում է աշխատավայրի սանիտարիայի և հիգիենայի ընդհանուր նորմերը (միկրոկլիման, ճառագայթումը, լուսավորվածությունը, տատանումները և այլն),</p> <p>3) ներկայացնում է աշխատանքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց անվնաս օգտագործումը,</p> <p>4) ներկայացնում է սանիտարիայի և հիգիենայի պահպանման համար անհրաժեշտ միջոցառումները:</p>
<b>25.</b>	<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կանխել հավանական վտանգները և վթարները, իրականացնել անվտանգության միջոցառումներ
<b>26.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների առաջացման պատճառները և հետևանքները,</p> <p>2) ներկայացնում է արտադրական վթարների կանխման աշխատանքները,</p> <p>3) ներկայացնում է առանձին խմբերի (հաշմանդամություն ունեցող անձինք, հղիներ, անչափահասներ և այլն) աշխատանքային առանձնահատուկ պայմանները և վտանգների կանխման սահմանված միջոցառումները,</p> <p>4) ներկայացնում է կենցաղային և արտադրական վթարների ու դժբախտ պատահարների փաստաթղթային ձևակերպումների կարգը:</p>
<b>27.</b>	<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ցուցաբերել առաջին օգնություն

28.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) տիրապետում է տարբեր իրավիճակներում առաջին օգնության հիմնական կանոններին,</p> <p>2) առաջին օգնության գործողությունների քայլերը ճիշտ է ներկայացնում,</p> <p>3) կատարում է արհեստական շնչառության և սրտի աշխատանքի վերականգնման գործողություն,</p> <p>4) կատարում է արյան հոսքի դադարեցման և բաց վնասվածքների վիրակապման գործողություն,</p> <p>5) կատարում է այրվածքների նախնական մշակման և էլեկտրահարվածին առաջին օգնություն ցուցաբերելու գործողություններ,</p> <p>6) կատարում է վիրակապման և անշարժացման գործողություն՝ տարբեր կտրվածքների դեպքում,</p> <p>7) ներկայացնում է տարբեր թունավորման դեպքերում առաջին օգնության կազմակերպման գործողությունները:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»</b>		
29.	<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ԱԳՀ-5-22-001
30.	<b>Մոդուլի նպատակը</b>	<p>Մոդուլը նպատակաուղղված է աշխատանքային հիմնական իրավահարաբերությունների մասին իրազեկվածության բարձրացմանը, աշխատանք փնտրելու և գտնելու կարողությունների զարգացմանը, աշխատանքային գործունեության ընդհանուր կարողությունների և հմտությունների ձևավորմանը, ընթացիկ հաջողության հասնելու նախապայմանների ստեղծմանը, ինչպես նաև ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողությունների ձևավորմանը:</p>
31.	<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
32.	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
33.	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
34.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Փնտրել և գտնել աշխատանք
35.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում է աշխատանքային իրավահարաբերությունների ձևավորման նախապայմանները,</p> <p>2) կարողանում է փնտրել առկա աշխատատեղերի բազան, ուսումնասիրել և ընտրել հավանական,</p>

		<p>աշխատատեղը(երը)՝ օգտագործելով աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները,</p> <p>3) ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (ՍԻՎԻ (CV),</p> <p>4) ներկայացնում է իր մասնագիտական ուժեղ կողմերը և հիմնավորում իր համապատասխանությունը,</p> <p>5) ներկայացնում է աշխատանքի ընդունվելու, աշխատանքի փոփոխության և աշխատանքից ազատվելու հիմնական ընթացակարգերը:</p>
<b>36.</b>	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Հարմարվել աշխատանքային միջավայրին, ապահովել աշխատանքային դրական մթնոլորտ
<b>37.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում է մասնագիտական գործունեության ոլորտում արտադրական միջավայրին ներկայացվող հիմնական պահանջները,</p> <p>2) հիմնավորում է տվյալ աշխատանքով զբաղվելու իր պատրաստակամությունը և տրամադրվածությունը,</p> <p>3) ներկայացնում է գործընկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետ հաղորդակցվելու օրինակներ,</p> <p>4) առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատրաստակամություն և պատասխանատվության դրսևորումներ,</p> <p>5) ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու կարողություններ:</p>
<b>38.</b>	<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Արդյունավետ աշխատել թիմում՝ պահպանելով էթիկայի նորմերը
<b>39.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում է կազմակերպության նպատակները և դրա իրականացման գործում թիմային աշխատանքի և միջանձնային հարաբերությունների կարևորությունը,</p> <p>2) ներկայացնում է թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները և խնդիրների լուծման մեթոդները,</p> <p>3) դրսևորում է հարգալից և պատշաճ վերաբերմունք գործընկերների նկատմամբ՝ ըստ նրանց վարքագծի դրսևորման,</p> <p>4) առաջադրում է լուծումներ գործընկերների շրջանում առաջացած խնդրահարույց իրավիճակներում,</p> <p>5) կարողանում է առանձին իրավիճակներում գերադասել թիմային շահը անձնական շահից:</p>



40.	<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները
41.	<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) բացատրում է աշխատանքային կարգապահության և պատասխանատվության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</li> <li>2) բացատրում է մասնագիտական կարողությունների պարբերական կատարելագործման կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</li> <li>3) բացատրում է նախաձեռնողականության և նպատակասլացության կարևորությունը աշխատանքային հաջողությունների հասնելու գործում,</li> <li>4) ներկայացնում է աշխատանքային գործունեության ընթացքում ստորադասության և վերադասության հարաբերությունների պատշաճության կարևորությունը:</li> </ol>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐՈՒԹՅՈՒՆ»</b>		
42.	<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-ՀՕ-5-22-001
43.	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է զարգացնել ուսանողի համակարգչային տեխնիկայից օգտվելու և դրա ծրագրային հնարավորությունները կիրառելու առաջնային կարողությունները, աշխատանքային գործունեության ընթացքում և անձնական կարիքների շրջանակներում կիրառել համակարգչային օպերացիոն համակարգերի, գրասենյակային փաթեթների (Մայքրոսոֆթ Օֆիս (Microsoft Office)) ծրագրերը, կատարելագործել համացանցից օգտվելու կարողությունները և տեղեկատվական բազաների հետ նպատակային աշխատելու հմտությունները:
44.	<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
45.	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
46.	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
47.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Կիրառել համակարգչային համալիրում ներառվող բաղադրիչները և օպերացիոն համակարգը
48.	<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) համակարգչային համալիրում ներառվող հիմնական և լրացուցիչ բաղադրիչները բնութագրում է,</li> <li>2) ճիշտ է պահպանում համակարգիչը և բաղադրիչները միացնելու, օգտագործելու և անջատելու տեխնիկական պայմանները,</li> </ol>

		<ul style="list-style-type: none"> <li>3) օգտվում է համակարգչային օժանդակ տեխնիկական սարքերից,</li> <li>4) ներկայացնում է օպերացիոն համակարգի պատուհանային կառուցվածքը,</li> <li>5) ներկայացնում է կիրառվող հիմնական ծրագրերը,</li> <li>6) բացում է առաջադրված թղթապանակը և ֆայլը,</li> <li>7) օգտվում է պատուհանային մենյուի հիմնական հրամաններից,</li> <li>8) ստեղծում է նոր թղթապանակ ու ֆայլ, պահպանում, բացում, փակում և տեղադրում է առաջադրված վայրում,</li> <li>9) կատարում է փաստաթղթի տպագրում:</li> </ul>
<b>49.</b>	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Խմբագրել և ֆորմատավորել տեքստեր
<b>50.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>1) հայերեն և օտար լեզվով տեքստ մուտքագրելու համար ծրագրերը պատրաստել է,</li> <li>2) մուտքագրում է տեքստ, մեծատառ նշաններ, սիմվոլներ, թվանշաններ,</li> <li>3) տեքստային ցուցիչը տեղաշարժելով կատարելում է ուղղումներ, ջնջումներ, լրացումներ, փոփոխություններ,</li> <li>4) մուտքագրված տեքստի պարզագույն ֆորմատավորման գործողությունները ճիշտ է կատարում,</li> <li>5) կարողանում է տեքստին կից ներմուծել նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ, անիմացիաներ:</li> </ul>
<b>51.</b>	<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Պատրաստել և խմբագրել աղյուսակներ
<b>52.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>1) աղյուսակներ կազմելու համակարգչային ծրագրերը և դրանց կիրառումը ներկայացնում է,</li> <li>2) առաջադրված չափերով կազմում է աղյուսակ և մուտքագրում տվյալներ,</li> <li>3) աղյուսակում կատարում է ուղղումներ, լրացումներ, փոփոխություններ,</li> <li>4) աղյուսակի տվյալների մեջ ստեղծում է պարզ ֆունկցիոնալ կախվածություն:</li> </ul>
<b>53.</b>	<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Կատարել գրաֆիկական խմբագրում և նկարազարդում
<b>54.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>1) գծագրում է գրաֆիկական օբյեկտներ՝ օգտագործելով նաև Աութըշեյփս (Autoshapes) պատուհանի պատրաստի ձևերը,</li> <li>2) գծագրում է կանոնավոր պատկերներ,</li> <li>3) ֆորմատավորում է գրաֆիկական օբյեկտները՝ տեղափոխելով, պատճենելով, պտտելով և չափերը փոխելով,</li> </ul>

		<ul style="list-style-type: none"> <li>4) խմբավորում է գրաֆիկական օբյեկտները,</li> <li>5) գծագրում է տեքստային բլոկներ,</li> <li>6) կատարում է գրաֆիկական օբյեկտների գունաերանգավորում:</li> </ul>
55.	<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Համակարգչային ծրագրերով կազմակերպել ցուցադրություն
56.	<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>1) ցուցադրական ծրագրերը և դրանց պատուհանի կառուցվածքը ճիշտ է ներկայացնում,</li> <li>2) մուտքագրում է տեքստ, թվային արժեքներ և պարզ գործողություններ,</li> <li>3) ներբեռնում է նկարներ, տեսանյութեր, անիմացիաներ, տվյալներ՝ աղյուսակի, գրաֆիկի տեսքով,</li> <li>4) կարողանում է առաջադրված թեմայով պատրաստել ավարտուն փաստաթուղթ ցուցադրության համար,</li> <li>5) ցուցադրում է պատրաստված տեղեկատվական նյութը:</li> </ul>
57.	<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Աշխատել համացանցում
	<b>Կատարման չափանիշներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է «համացանց» հասկացությունը,</li> <li>2) օգտագործում է ինտերնետային հիմնական ծրագրերը,</li> <li>3) ներկայացնում է Հիսթորի (History), Ֆևորիթս (Favorites), Սթոփ (Stop), Ռիֆրեշ (Refresh) հրամանների, Բեք (Back) և Ֆորվարդ (Forward) կոճակների նշանակությունը,</li> <li>4) փնտրում է առաջադրված տվյալները համացանցի տեղեկատվական բազաներում (որոնողական և բաց ցանցերից),</li> <li>5) կարողանում է համացանցից ներբեռնել, պահպանել և օգտագործել տեղեկությունները,</li> <li>6) գրանցվում է էլեկտրոնային փոստում, ինտերնետային ծրագրերում և այլ կայքերում,</li> <li>7) օգտագործում է էլեկտրոնային փոստի հնարավորությունները, ուղարկում և ստանում ինֆորմացիա:</li> </ul>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅՈՒՆ»</b>		
58.	<b>Մոդուլի դասիչը</b>	ԱՀ-Ձ-5-22-001
59.	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել բիզնես գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ գործնական հմտություններ: Դրանք ներառում են ինքնուրույն բիզնես կազմակերպելու և վարելու համար անհրաժեշտ գործողությունների իրականացման հմտություններ, որոնցում հաշվի է

		անվաճ ինչպես գործարար ոլորտին հատուկ սկզբունքները, այնպես էլ բիզնես գործունեությունը կարգավորող իրավական դաշտի առանձնահատկությունները:
<b>60.</b>	<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ
<b>61.</b>	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլի 1 և 2 ուսումնառության արդյունքներն ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չէ: Մյուս ուսումնառության արդյունքների ուսումնասիրությունը նպատակահարմար է իրականացնել որոշակի մասնագիտական մոդուլներ յուրացնելուց հետո, որպեսզի դրանց գործնական ձեռքբերումները օգտագործվեն համապատասխան ծրագրեր մշակելու համար:
<b>62.</b>	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է
<b>63.</b>	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հիմնավորված բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացը
<b>64.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) բիզնես-գործունեության էությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>2) բիզնես-գործունեության տեսլականը, նպատակը և ռազմավարությունը ճիշտ է սահմանում,</li> <li>3) բիզնես-գործունեության համար նախընտրելի անձնային հատկանիշների կարևորությունը հիմնավորում է,</li> <li>4) բիզնես-գործունեության համար սեփական հնարավորությունների գնահատումը ճիշտ է,</li> <li>5) բիզնես-գաղափարի էությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>6) բիզնես-գաղափարի ձևավորման գործընթացի բաղադրիչների իմաստը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>7) ըստ իրավիճակների հիմնավորում է ձևավորված բիզնես-գաղափարները,</li> <li>8) բիզնես-գաղափարի տարբերակի գնահատումը ճիշտ է:</li> </ol>
<b>65.</b>	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել կազմակերպության ստեղծման և գրանցման կարգը, կառավարման գործընթացը
<b>66.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) կազմակերպության կազմակերպական-իրավական ձևերի բնութագիրը ճիշտ է,</li> <li>2) կազմակերպության աշխատանքը կարգավորող իրավական ակտերի պահանջների ընկալումը ճիշտ է,</li> <li>3) կազմակերպության ստեղծման քայլերի հաջորդականությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>4) կազմակերպության ստեղծման համար պահանջվող փաստաթղթերի ձևավորումը ճիշտ է,</li> </ol>

		<p>5) կազմակերպության կառավարման անհրաժեշտությունը և խնդիրները ճիշտ է մեկնաբանում,</p> <p>6) կառավարման ֆունկցիաների բնութագրերը ճիշտ է,</p> <p>7) կառավարման ոճերի բնութագրերը ճիշտ է,</p> <p>8) կառավարման ֆունկցիոնալ բաժինների ձևավորման մոտեցումները ճիշտ է,</p> <p>9) աշխատատեղերի ձևավորման և պարտականությունների բաշխման մոտեցումները հիմնավոր է,</p> <p>10) աշխատողների ընտրության կարգը հիմնավոր է,</p> <p>11) կազմակերպության կառավարմանն առընչվող փաստաթղթերի ձևավորումը ամբողջական և հիմնավոր է,</p> <p>12) կնքվելիք պայմանագրերի կազմը և բովանդակությունը իրավաբանորեն ճիշտ է,</p> <p>13) կառավարման արդյունավետության գնահատման մոտեցումները հիմնավոր է:</p>
<b>67.</b>	<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Կատարել շուկայի հետազոտման և գնահատման գործողություններ
<b>68.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է մեկնաբանում «շուկա» հասկացությունը,</p> <p>2) շուկայի հետազոտման անհրաժեշտությունը հիմնավորում է,</p> <p>3) շուկայի հետազոտման հիմնական ուղղությունները բացահայտում է,</p> <p>4) շուկայի հետազոտման գործընթացի փուլերը ճիշտ է բնութագրում,</p> <p>5) ըստ փուլերի շուկայի հետազոտման մեթոդների ընտրությունը հիմնավոր է,</p> <p>6) շուկայական պահանջարկի ծավալի բացահայտման մոտեցումները ճիշտ է,</p> <p>7) շուկայի վրա ազդող գործոնների և գնորդի վարքագծի գնահատումը ճիշտ է,</p> <p>8) շուկայական մրցակցության գնահատումը հիմնավոր է,</p> <p>9) շուկայի հատվածավորումը իրատեսական է,</p> <p>10) մարքեթինգի գաղափարների /4ՓԻ (4P) և 7ՓԻ (7P)/ նշանակությունը ճիշտ է բացահայտում,</p> <p>11) մարքեթինգային ռազմավարության մշակման մոտեցումները հիմնավորված է:</p>
<b>69.</b>	<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Բնութագրել կազմակերպության ռեսուրսները և գնահատել օգտագործման արդյունավետությունը
<b>70.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) կազմակերպության ռեսուրսների կազմը և կառուցվածքը ճիշտ է բացահայտում,</p> <p>2) կազմակերպության ռեսուրսների խմբերի միջև օպտիմալ հարաբերակցության ապահովման անհրաժեշտությունը հիմնավորում է,</p>

		<ol style="list-style-type: none"> <li>3) նյութական ռեսուրսների խմբերի տնտեսագիտական բնութագրերը ճիշտ է,</li> <li>4) աշխատանքային ռեսուրսների բնութագիրը և դրանց առնչվող ցուցանիշների մեկնաբանությունը ճիշտ է,</li> <li>5) աշխատանքի տեխնիկական նորմավորման էությունը ճիշտ է բացատրում, նորմաների մեծության ձևավորման մեխանիզմը ճիշտ է ներկայացնում,</li> <li>6) ֆինանսական ռեսուրսների հետ կապված հասկացությունների բացատրությունը ճիշտ է,</li> <li>7) ֆինանսական ռեսուրսների համալրման աղբյուրների առանձնահատկությունները ճիշտ է մեկնաբանում,</li> <li>8) ռեսուրսների պահանջվելիք մեծության հաշվարկման մոտեցումները հիմնավոր է,</li> <li>9) հիմնական կապիտալի առանձին խմբերի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</li> <li>10) շրջանառու կապիտալի օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</li> <li>11) աշխատանքային ռեսուրսների օգտագործման արդյունավետության ցուցանիշների հաշվարկը և արդյունքների գնահատումը ճիշտ է,</li> <li>12) ռեսուրսների օգտագործման վերաբերյալ պարզ վերլուծական գործողությունները և ըստ արդյունքների եզրահանգումները հիմնավոր է:</li> </ol>
71.	<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Կատարել ծախսերի հաշվարկ, ձևավորել ապրանքի /ծառայության/ գինը
72.	<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) «ծախս» հասկացության բովանդակությունը ճիշտ է մեկնաբանում,</li> <li>2) տարբերակում է ծախսերի խմբերը,</li> <li>3) ծախսերը հիմնավորող փաստաթղթերի տեսակները և վավերապայմանները ճիշտ է ներկայացնում,</li> <li>4) ծախսերի տարբեր խմբերի հաշվապահական ձևակերպումները ճիշտ է,</li> <li>5) ապրանքների տարբեր տեսակների և ծառայությունների տարբեր խմբերի համար պահանջվող ծախսերի կազմը հիմնավոր է ներկայացնում,</li> <li>6) ապրանքի կամ ծառայության ինքնարժեքի մեջ ներառվող ծախսերի հոդվածները ճիշտ է ներկայացնում,</li> </ol>

		<p>7) ինքնարժեքի տարբեր հոդվածների մեծության հաշվարկման մեթոդաբանությունը ճիշտ է կիրառում,</p> <p>8) հաշվում է ապրանքի կամ ծառայության միավորի ինքնարժեքը,</p> <p>9) ինքնարժեքի իջեցման հնարավորությունները ճիշտ է գնահատում,</p> <p>10) ինքնարժեք-շուկայական գին մարժայի տարբերության հիմնավորումը ճիշտ է,</p> <p>11) անհատական գնից շուկայական գնի անցման տրամաբանությունը բացատրում է:</p>
<b>73.</b>	<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Մշակել բիզնես պլան և գործողությունների ծրագիր
<b>74.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) բիզնես գործունեության համար բիզնես պլանի անհրաժեշտությունը հիմնավորում է,</p> <p>2) բիզնես պլանի բաժինների բովանդակության մեկնաբանությունները ճիշտ է,</p> <p>3) բիզնես պլանի մշակման համար անհրաժեշտ ելակետային տվյալների կազմը և ձեռք բերման աղբյուրները ճիշտ է ներկայացնում,</p> <p>4) ճիշտ է կատարում ՍՎՕԹ (SWOT) վերլուծություն,</p> <p>5) ՍՎՕԹ (SWOT) վերլուծության արդյունքները կիրառում է բիզնես պլանը մշակելու գործընթացում,</p> <p>6) բիզնես պլանով նախատեսվող միջոցառումները հիմնավորված է,</p> <p>7) բիզնես պլանի կատարումն ապահովող գործողությունների ծրագիրը, ժամանակացույցը հիմնավոր է,</p> <p>8) բիզնես պլանի կատարումն ապահովող ռեսուրսների մեծությունները ճիշտ է սահմանվել,</p> <p>9) բիզնես պլանով նախատեսված միջոցառումների իրականացման ռիսկերը և դրանց հաղթահարման քայլերը հիմնավոր են:</p>
<b>75.</b>	<b>Ուսումնառության արդյունք 7</b>	Հաշվել հարկեր, տուրքեր, կազմել ֆինանսական հաշվետվություններ
<b>76.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) հարկային օրենսդրության հիմնական դրույթները ճիշտ է մեկնաբանում,</p> <p>2) հարկային օրենսդրության հիմնական հասկացությունները ճիշտ է բացատրում,</p> <p>3) հարկերի և տուրքերի մեծությունը հաշվելու համար կիրառվող ելակետային ցուցանիշների հաշվարկը ճիշտ է կատարում,</p> <p>4) հարկերի և տուրքերի մեծությունը ճիշտ է հաշվարկում,</p> <p>5) հարկերի վճարման ժամկետների գնահատումը համապատասխանում է օրենսդրության</p>

		<p>պահանջներին,</p> <ol style="list-style-type: none"><li>6) ֆինանսական հաշվետվությունների կազմը ճիշտ է ներկայացնում,</li><li>7) անհրաժեշտ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ է լրացնում,</li><li>8) ստուգումների իրականացման իրավական ակտերի պահանջները ճիշտ է բացատրում,</li><li>9) ստուգումների հետ կապված տնտեսվարողի իրավունքներն ու պարտականությունները ճիշտ է ներկայացնում:</li></ol>
--	--	--



**Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության 0923.02.01.5  
«Սոցիալական սպասարկող» որակավորման հիմնական կրթական ծրագրի ընդհանուր մասնագիտական և հատուկ  
մասնագիտական կարողությունների մոդուլներ**

<b>Մ Ո Դ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ»</b>		
<b>1.</b>	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-001
<b>2.</b>	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել սոցիալական աշխատանքի՝ որպես մասնագիտական գործունեության, սոցիալական ծառայությունների դերի և սոցիալական աշխատանքի ուղղությունների վերաբերյալ համապատասխան գիտելիքներ և դրանց կիրառման կարողություններ:
<b>3.</b>	<b>Մոդուլի տևողությունը</b>	36 ժամ
<b>4.</b>	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
<b>5.</b>	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>6.</b>	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել սոցիալական աշխատանքի տեսական հիմքերը
<b>7.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է սահմանում «սոցիալական աշխատանք» հասկացությունը, 2) առանձնացնում է սոցիալական աշխատանքի ձևավորման, զարգացման և տարածման հիմնական փուլերը, 3) ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի օբյեկտները:
<b>8.</b>	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կիրառել սոցիալական աշխատանքի մեթոդները
<b>9.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է սոցիալական աշխատանքի հիմնական մեթոդները, 2) կիրառում է անհատական աշխատանքի մեթոդը, 3) կիրառում է խմբային աշխատանքի մեթոդը, 4) կիրառում է համայնքային աշխատանքի մեթոդը, 5) ճիշտ է համադրում անհատական, խմբային և համայնքային մեթոդները՝ առանձնացնելով նմանություններն ու տարբերությունները:
<b>Մ Ո Դ ՈՒ Լ Ի Ա Ն Վ Ա Ն ՈՒ Մ Ը «ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ»</b>		

10.	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-002
11.	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ զարգացնել տարբեր սոցիալական խմբերի առանձնահատկություններին համապատասխան սոցիալական ծառայություններ իրականացնելու գործընթացում սոցիալ-հոգեբանական մեթոդների կիրառման կարողություններ:
12.	<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ
13.	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
14.	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
15.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել հոգեբանական ուսումնասիրման մեթոդները և կիրառել դրանք տարբեր իրավիճակներում
16.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է հոգեբանական ուսումնասիրման մեթոդները, 2) ըստ առաջադրված իրավիճակի ընտրում և կիսողում է հոգեբանական ուսումնասիրման մեթոդը (դիտման, հոգեբանական, հոգեվերլուծական զրույցի, գիտափորձ, թեստերի, պրոյեկտիվ թեստերի, հարցաթերթի, սոցիոմետրիայի):
17.	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել անձի և սոցիալական խմբերի, այդ թվում՝ ընտանիքի հոգեբանությունը և կիրառել մեթոդիկաներ
18.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում անձի կառուցվածքը, 2) սահմանում և նկարագրում է անձի պահանջմունքների տեսակները (նյութական, հոգևոր, սոցիալական) և դրանց հիերարխիան, 3) թվարկում է անձի զարգացման փուլերն ու ներկայացնում դրանց հոգեբանական բնութագիրը (խառնվածք, բնավորություն, ունակություն), 4) ճիշտ է ներկայացնում ընտանիքի կառուցվածք, ընտանեկան կարգավիճակներն ու դերերը, 5) նկարագրում և համեմատում է ընտանիքի զարգացման կենսական փուլերը, 6) կատարում է վերլուծություններ ընտանեկան հարաբերությունների ճգնաժամերի և դրանց կանխարգելման ուղիների շուրջ:
19.	<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Նկարագրել հոգեբանական խորհրդատվության տեսակները և հիմնական փուլերը, կիրառել հոգեբանական դիագնոստիկայի մեթոդներ
20.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) տարանջատում է հոգեբանական խորհրդատվության հիմնական տեսակները (անհատական, խմբային,

		երեխաների և դեռահասների, զույգերի և ընտանեկան, մասնագիտական կողմնորոշման), 2) նկարագրում է հոգեբանական խորհրդատվության հիմնական փուլերը (նախապատրաստման, կարգավորման, ախտորոշման կամ դիագնոստիկայի, առաջարկությունների և վերահսկման), 3) կիրառում է հոգեդիագնոստիկ մեթոդներ՝ ուղղված անձի անհատական-հոգեբանական առանձնահատկությունների բացահայտմանը և ընտանեկան հարաբերությունների գնահատմանը:
21.	<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Բնութագրել կոնֆլիկտների կանխարգելումը և կառավարումը
22.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) սահմանում է կոնֆլիկտի էությունը, 2) ճիշտ է նկարագրում է կոնֆլիկտի փուլերը (կանխատեսում, կանխարգելում կամ հրահրում, կարգավորում, հանգուցալուծում), 3) ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի հոգեբանական տիրույթը, զգացմունքային և ճանաչողական մակարդակը, 4) բնութագրում է կոնֆլիկտի կառավարման գործընթացը սոցիալական աշխատանքի համատեքստում:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼ-ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ»</b>		
23.	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-003
24.	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել սոցիալ-մանկավարժական աշխատանքի մեթոդիկաների և տեխնոլոգիաների կիրառման համար անհրաժեշտ կարողություններ և հմտություններ:
25.	<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ
26.	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
27.	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
28.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների կառուցվածքն ու դրանց իրականացման փուլերը
29.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) բնութագրում է ախտորոշիչ սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաները և դրանց կիրառման փուլերը, 2) բնութագրում է կանխատեսող սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաները և դրանց կիրառման փուլերը, 3) բնութագրում է նպատակահարմար սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաները և դրանց կիրառման փուլերը, 4) բնութագրում է սոցիալ-մանկավարժական շտկողական տեխնոլոգիաները և դրանց կիրառման փուլերն ու առանձնահատկությունները,

		<p>5) բնութագրում է վերականգնողական սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաները և կիրառման փուլերն ու առանձնահատկությունները</p> <p>6) ճիշտ է իրականացնում ըստ ընտրված սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիայի նախապատրաստական աշխատանքները,</p> <p>7) վերլուծում և գնահատում է կիրառված սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիայի արդյունքները:</p>
30.	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կիրառել սոցիալ-մանկավարժական աշխատանքի տեխնոլոգիաները սոցիալական տարբեր պայմանական խմբերի հետ
31.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում է ռիսկի խմբի մեջ գտնվող մարդկանց նկարագիրը,</p> <p>2) առանձնացնում է սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները ռիսկի խմբի երեխաների հետ,</p> <p>3) բնութագրում է ընտանիքի հետ սոցիալ-մանկավարժական աշխատանքի տեխնոլոգիաները,</p> <p>4) բնութագրում է սոցիալ-մանկավարժական աշխատանքի տեխնոլոգիաներն առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հետ,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում մանկական օժտվածության ախտորոշման մեթոդներն ու տեխնոլոգիաները,</p> <p>6) ներկայացնում է սոցիալ-մանկավարժական աշխատանքում համագործակցային տեխնոլոգիաների կիրառումը հանրակրթական դպրոցում</p> <p>7) ճիշտ է ներկայացնում հանրակրթական դպրոցներում և սոցիալական պաշտպանության հաստատություններում անձի մասնագիտական կողմնորոշման և կարիերայի ուղղորդման տեխնոլոգիաները սոցիալ-մանկավարժական աշխատանքի շրջանակում,</p> <p>8) ճիշտ է բնութագրում շեղումը՝ որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր,</p> <p>9) ճիշտ է ներկայացնում ավոհոլիզմը, թմրամոլությունը՝ որպես անձի շեղված վարքի արտահայտման ձև,</p> <p>10) ներկայացնում է անչափահասների կատարած հանցագործությունը՝ որպես սոցիալ-մանկավարժական հիմնախնդիր,</p> <p>11) ներկայացնում է անչափահաս իրավախախտների հետ սոցիալ-մանկավարժական գործունեության առանձնահատկությունները,</p> <p>12) կիրառում է սոցիալ-մանկավարժական աշխատանքի տեխնոլոգիաները սոցիալական տարբեր պայմանական խմբերի հետ:</p>

32.	<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել սոցիալականացման, սոցիալական հարմարման և սոցիալական դաստիարակության գործընթացը
33.	<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ճիշտ է բնութագրում սոցիալականացումը, սոցիալականացման գործընթացը,</li> <li>2) ճիշտ է բնութագրում սոցիալականացման օրինաչափությունները,</li> <li>3) ճիշտ է ներկայացնում անձի սոցիալականացման հիմնական ինստիտուտները (ընտանիք, կրթություն, կրոն, մշակույթ),</li> <li>4) ճիշտ է բնութագրում սոցիալական ադապտացիան (հարմարումը),</li> <li>5) ճիշտ է ներկայացնում դաստիարակության և ինքնադաստիարակության դերը անձի սոցիալականացման գործում,</li> <li>6) ներկայացնում է սոցիալական դաստիարակության խնդիրները,</li> <li>7) ներկայացնում է դաստիարակության և սոցիալական դաստիարակության առանձնահատկությունները,</li> <li>8) ներկայացնում է սոցիալականացման դերը՝ անձի զարգացման գործընթացում:</li> </ol>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ»</b>		
34.	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-004
35.	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ սոցիալական ապահովության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի հիմնական դրույթների վերաբերյալ, աշխատանքի ընթացքում ծագած խնդիրների ճիշտ ընկալման և օրենսդրության շրջանակներում համապատասխան լուծումների առաջարկման համար:
36.	<b>Մոդուլի տևողությունը</b>	108 ժամ
37.	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
38.	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
39.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել սոցիալական աջակցության կարիք ունեցող անձանց խմբերը և նրանց իրավունքներն ու պետության կողմից սահմանված երաշխիքները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի հիմնական դրույթները
40.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) թվարկում է սոցիալական պաշտպանության կարիք ունեցող անձանց խմբերը (երեխաներ, տարեցներ, հաշմանդամություն ունեցող անձինք, կանայք (մայրեր), միգրանտներ, անապահով ընտանիքներ),

		<p>2) սահմանում է «կյանքի դժվարին իրավիճակ» եզրույթը և թվարկում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող անձանց օրինակներ (գործազուրկ, թրաֆիկինգի զոհ, փախստական, ազատագրված վայրում գտնվող կամ վերադարձած անձ և այլն),</p> <p>3) թվարկում է սոցիալական աջակցության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը,</p> <p>4) ներկայացնում է սոցիալական աջակցության նպատակը, սոցիալական աջակցության կազմակերպման և տրամադրման սկզբունքները,</p> <p>5) թվարկում է սոցիալական ծառայությունների հիմնական տեսակները և տալիս դրանց սահմանումները,</p> <p>6) թվարկում և մեկնաբանում է սոցիալական աջակցություն հայցող և ստացող անձանց իրավունքներն ու պարտականությունները,</p> <p>7) թվարկում և մեկնաբանում է սոցիալական աշխատանքի մասնագետների՝ սոցիալական աշխատողի և սոցիալական սպասարկողի իրավունքները և պարտականությունները,</p> <p>8) ներկայացնում և մեկնաբանում է կյանքի դժվարին իրավիճակում գտնվող, այդ թվում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության երաշխիքները,</p> <p>9) ներկայացնում և մեկնաբանում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման և պաշտպանության համակարգը,</p> <p>10) թվարկում է պետական նպաստների տեսակները և հրատապ օգնություն ստանալու դեպքերը, ներկայացնում դրանց տրամադրման հիմքերը,</p> <p>11) ներկայացնում է խնամքի ծառայությունները, խնամք իրականացնող հաստատությունների տիպերը և տրամադրման կարգն ու պայմանները:</p> <p>12) ներկայացնում է բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց (ընտանիքներին) հաշվառելու և կացարան տրամադրելու կարգը,</p> <p>13) թվարկում և մեկնաբանում է ընտանիքում բռնություն հասկացությունը և բռնության տեսակները:</p>
41.	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել կենսաթոշակային ապահովության ոլորտի նորմատիվ իրավական ակտերի հիմնական դրույթները
42.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) թվարկում է կենսաթոշակային ապահովության ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը,</p> <p>2) ներկայացնում և բացատրում է պետական կենսաթոշակային ապահովության և կենսաթոշակային ապահովագրության համակարգերի տարբերությունը,</p>

		<p>3) թվարկում է կենսաթոշակների տեսակները, դրանց նշանակման, դադարեցման, վերականգնման հիմքերը,</p> <p>4) ներկայացնում է անհատական (անձնավորված) հաշվառման կենսաթոշակային ապահովագրության համակարգը, այդ համակարգում հաճախորդի հաշվառվելու համար սահմանված անհատական տվյալները:</p>
43.	<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել բնակչության զբաղվածության ապահովման ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի հիմնական դրույթները
44.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) թվարկում է բնակչության զբաղվածության ապահովման ոլորտը կարգավորող նորմատիվ իրավական ակտերը,</p> <p>2) ներկայացնում է և մեկնաբանում զբաղվածության պետական քաղաքականության նպատակը և սկզբունքները,</p> <p>3) ներկայացնում է աշխատանք փնտրող անձանց, գործազուրկի կարգավիճակ ունեցող անձանց, հաշմանդամություն ունեցող անձանց և աշխատաշուկայում անմրցունակ անձանց համար սահմանված պետական երաշխիքները,</p> <p>4) նկարագրում է զբաղվածության կարգավորման ամենամյա պետական ծրագրի դերը և մշակման ընթացակարգը,</p> <p>5) ներկայացնում և մեկնաբանում է համաձայնեցման կոմիտեների դերը ամենամյա պետական ծրագրի իրականացման գործընթացում,</p> <p>6) մեկնաբանում է գործատուների մասնակցությունը զբաղվածության պետական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացներին:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ»</b>		
45.	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-005
46.	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել սոցիալական աշխատանքի բարեվարքության կանոնների վերաբերյալ գիտելիքներ և դրանք կիրառելու կարողություններ:
47.	<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
48.	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար սկզբնական մասնագիտական գիտելիքներ պետք չեն:
49.	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման

		չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է.
50.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել սոցիալական աշխատողի միջազգային հանրության կողմից ճանաչված և ընդունված մասնագիտական արժեքներն ու սկզբունքները
51.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) թվարկում և մեկնաբանում սոցիալական աշխատանքում բարեվարքության սկզբունքները և արժեքային համակարգը, 2) թվարկում և մեկնաբանում է սոցիալական աշխատողների միջազգային ընկերության կողմից ընդունված բարեվարքության կանոնները:
52.	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Պահպանել բարեվարքության կանոնները տարբեր իրավիճակներում
53.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է սոցիալական աշխատանքում առավել հաճախ հանդիպող բարեվարքային երկրնտրանքները և դրանց հաղթահարումը, 2) պահպանում է բարեվարքության կանոնները տարբեր իրավիճակներում, 3) կարողանում է ճիշտ կողմնորոշվել բարեվարքային երկրնտրանքի դեպքում և առաջարկում է դուրս գալու ելք:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼ-ՎԱՐՉԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ»</b>		
54.	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-006
55.	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել գիտելիքներ մասնագիտական գործունեության ընթացքում սոցիալ-վարչարարական գործառույթների իրականացման և փաստաթղթաշրջանառության և գործավարության կազմակերպման վերաբերյալ:
56.	<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ
57.	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀ-ՀՕ-5-22-001 «Համակարգչային օպերատորություն», ՍԱՍՍ-5-22-004 «Օրենսդրական ակտերի կիրառումը սոցիալական աշխատանքում» մոդուլները:
58.	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
59.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել փաստաթղթերի դերը և նշանակությունը կառավարման համակարգում
60.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է փաստաթղթի էությունը և նշանակությունը կառավարման համակարգում, 2) ներկայացնում է փաստաթղթերի դասակարգումը և տեսակները,



		<p>3) ներկայացնում է փաստաթղթերի ձևակերպման միասնական կարգը և դրա կիրառման անհրաժեշտությունը,</p> <p>4) ներկայացնում է փաստաթղթերի իրավական արժեքը,</p> <p>5) ներկայացնում է ծառայողական փաստաթղթերի յուրահատկությունները և սոցիալական պաշտպանության ոլորտում կիրառվող փաստաթղթերի ձևաթղթերը,</p> <p>6) ներկայացնում է էլեկտրոնային թղթակցության սկզբունքները, դրա առավելությունները և թերությունները:</p>
<b>61.</b>	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել կազմակերպական և կարգադրական բնույթի փաստաթղթերի տեսակները և դրանց ձևակերպման առանձնահատկությունները, կազմել աշխատանքայի փաստաթղթեր
<b>62.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում և մեկնաբանում է կազմակերպական բնույթի փաստաթղթերի (կանոնադրություններ, կարգեր, աշխատակարգեր) առանձնահատկությունները և ձևակերպման սկզբունքները,</p> <p>2) ներկայացնում և մեկնաբանում է կարգադրական բնույթի փաստաթղթերի (հրամաններ, կարգադրություններ, որոշումներ) առանձնահատկությունները և ձևակերպման սկզբունքները,</p> <p>3) ներկայացնում և մեկնաբանում է տեղեկատվական բնույթի թղթակցությունների (գրություններ, ակտեր, զեկուցագրեր, տեղեկանքներ, արձանագրություններ և այլն) առանձնահատկությունները և ձևակերպման սկզբունքները,</p> <p>4) ներկայացնում և մեկնաբանում է անձնակազմի վերաբերյալ փաստաթղթերի (հրամաններ անձնակազմի վերաբերյալ, աշխատանքային պայմանագրեր, աշխատանքային գրքույկներ, անձնական թերթիկներ և այլն) առանձնահատկությունները և ձևակերպման սկզբունքները,</p> <p>5) թվարկում է գործատուի ներքին և անհատական իրավական ակտերի տեսակները,</p> <p>6) կազմում է տարբեր աշխատանքային փաստաթղթեր:</p>
<b>63.</b>	<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել գործավարությունում փաստաթղթերի հետ աշխատանքների կազմակերպման սկզբունքները
<b>64.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում է փաստաթղթաշրջանառության կազմակերպման սկզբունքները,</p> <p>2) ներկայացնում է մտից, ելից փաստաթղթերի, ներքին փաստաթղթերի, քաղաքացիների առաջարկությունների, դիմումների և բողոքների քանակի հաշվառման և գրանցման սկզբունքները,</p> <p>3) ներկայացնում է փաստաթղթերի ինդեքսավորման, գրանցման ձևերն ու դրանց լրացման կարգը,</p> <p>4) ներկայացնում է փաստաթղթերի կատարման հսկողության նշանակությունը ու տեսակները,</p>

		<p>5) ներկայացնում է գործերի ձևակերպման, վարման, անվանակարգման սկզբունքները,</p> <p>6) ներկայացնում է փաստաթղթերի արխիվացման և պահպանման անհրաժեշտությունը և արխիվացման ընթացակարգը:</p>
<b>65.</b>	<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել կադրային գործի վարման գործընթացի կազմակերպման գործնական դրսևորումները
<b>66.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում է աշխատանքային պայմանագիրը՝ որպես աշխատանքային հարաբերությունների իրավական հիմք,</p> <p>2) ներկայացնում է աշխատանքային պայմանագրի բովանդակությունը և պայմանագրի կողմերը,</p> <p>3) ներկայացնում է աշխատանքային պայմանագրի ձևերը, տեսակները (անորոշ ժամկետով և որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագիր) և կնքման կարգը,</p> <p>4) ներկայացնում է արձակուրդ ստանալու կարգերը,</p> <p>5) ներկայացնում է ծառայողական գործուղումը, գործուղման ծախսերի սահմանման և հաշվետվությունների ընդունման կարգը,</p> <p>6) ներկայացնում է անձնակազմի վերապատրաստման ընթացակարգը,</p> <p>7) աջակցում է թափուր աշխատեղերի լրացման մրցույթների կազմակերպմանը,</p> <p>8) ներկայացնում և մեկնաբանում է աշխատանքային կարգապահությունը, ինչպես նաև գործատուի կողմից կիրառվող տույժերը և խրախուսանքները՝ կապված աշխատանքային կարգապահության հետ:</p>
<b>67.</b>	<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Ներկայացնել վարչական վարույթի կիրառման գործընթացը մասնագիտական գործունեության ընթացքում
<b>68.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ըստ ծառայության տեսակի՝ թվարկում է աջակցություն հայցող անձի հաշվառման համար օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի ցանկը,</p> <p>2) սահմանում է վարչական վարույթ հասկացությունը և նկարագրում վարչական վարույթի հարուցման, վարույթի ընթացքի և ավարտական փուլերը,</p> <p>3) ներկայացնում է վարչական վարույթի վերաբերյալ գործերի վարման և հաշվառման, քննարկումների արձանագրման ընթացակարգերը, կազմում է արձանագրության օրինակ,</p> <p>4) սահմանում է վարչական ակտ հասկացությունը, տեսակները, ձևերը,</p> <p>5) ներկայացնում և մեկնաբանում է վարչական բողոք բերելու հիմքերը և կարգը:</p>
<b>69.</b>	<b>Ուսումնառության արդյունք 6</b>	Կիրառել ընթացիկ մշտադիտարկման և գնահատման գործիքներ
<b>70.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	1) նկարագրում է սոցիալական պաշտպանության համակարգի ծրագրերի և ծառայությունների

		<p>մշտադիտարկման և արդյունավետության գնահատման գործընթացը, հիմնավորում այդ գործընթացի անհրաժեշտությունը,</p> <p>2) մասնակցում է սոցիալական պաշտպանության համակարգի ծրագրերի և ծառայությունների մշտադիտարկման և գնահատման գործընթացին:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ»</b>		
71.	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-007
72.	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել գիտելիքներ սոցիալական ապահովության ոլորտի գործող տեղեկատվական համակարգերի կառուցվածքի, փոխադարձ կապերի, սպասարկման և տեղեկատվության մշակման հիմնախնդիրների, ինչպես նաև հարակից (արտաքին) տեղեկատվական համակարգերի, տեղեկատվական հարթակների և այլ թվային գործիքների մասին, ինչպես նաև դրանք կիրառելու կարողություններ:
73.	<b>Մոդուլի տևողությունը</b>	108 ժամ
74.	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ԱՀ-ՀՕ-5-22-001 «Համակարգչային օպերատորություն» մոդուլը:
75.	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է»
76.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Կիառել սոցիալական ապահովության ոլորտում գործող տեղեկատվական համակարգերը մասնագիտական գործունեության ընթացքում
77.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ընդունում է սոցիալական ծառայությունների տարածքային մարմնի միասնական ընդունարան դիմած անձի դիմումը և փաստաթղթերը,</p> <p>2) իրականացնում է աջակցության կարիք ունեցող անձի ընտանիքի հաշվառումը համապատասխան տեղեկատվական համակարգում,</p> <p>3) խնամքի կարիք ունեցող տարեց անձին հաշվառում է համապատասխան տեղեկատվական համակարգում,</p> <p>4) տեղեկատվություն է ստանում ընտանիքի անդամների հաշմանդամության, ֆունկցիոնալ սահմանափակման աստիճանի, ժամկետների, վերականգնողական անհատական ծրագրի մասին,</p> <p>5) խորհրդատվություն է տրամադրում կենսաթոշակների, պարգևավճարների, փոխհատուցումների</p>

		<p>վճարման էլեկտրոնային համակարգի և վճարման ընթացակարգի վերաբերյալ,</p> <p>6) աշխատանք փնտրող անձի հերթական այցը գրանցում է համապատասխան տեղեկատվական համակարգում և կատարում հարմար աշխատանքի առաջարկ,</p> <p>7) կազմում է հաշվետվություն բարեգործական ծրագրերի վերաբերյալ,</p> <p>8) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի տվյալները մուտքագրում է համապատասխան տեղեկատվական համակարգ,</p> <p>9) տեղեկություններ է հավաքում անձի բնակարանային պայմանների վերաբերյալ,</p> <p>10) անձին խորհրդատվություն է տրամադրում ավանդների փոխհատուցման ընթացակարգի և ժամկետների վերաբերյալ,</p> <p>11) պրոթեզաօրթոպեդիկ և վերականգողական պարագաներ ստացող անձի, այդ պարագաները տրամադրող կազմակերպության, ինչպես նաև անձին տրամադրված հավաստագրի տվյալները հաշվառում է համապատասխան տեղեկատվական համակարգում:</p>
78.	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Օգտվել հարակից (արտաքին) տեղեկատվական համակարգերից
79.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) թվարկում է ընտանիքի անապահովության գնահատման բնութագրիչները,</p> <p>2) տեղեկություններ է հավաքում ընտանիքի անդամների անհատական տվյալների, բնակության վայրի, քաղաքացիական կացության վերաբերյալ,</p> <p>3) տեղեկություններ է հավաքում ընտանիքի անդամների առողջական խնդիրների վերաբերյալ,</p> <p>4) տեղեկություններ է հավաքում ընտանիքի անդամների աշխատելու, աշխատավարձի չափի, բիզնես գործունեությամբ զբաղված լինելու, վճարած հարկերի վերաբերյալ,</p> <p>5) տեղեկություններ է հավաքում ընտանիքի անդամների՝ ոստիկանությունում հաշվառված լինելու վերաբերյալ,</p> <p>6) տեղեկություններ է հավաքում ընտանիքի անդամների փախստականի կարգավիճակ ունենալու մասին,</p> <p>7) տեղեկություններ է հավաքում ընտանիքի անդամների դատվաճության վերաբերյալ,</p> <p>8) տեղեկություններ է հավաքում ընտանիքի դպրոցահասակ երեխաների դպրոց հաճախելիության մասին,</p> <p>9) տեղեկություններ է հավաքում ընտանիքի անդամների վարկային պատմության վերաբերյալ,</p> <p>10) գնահատում է ընտանիքի գույքային և ոչ գույքային ռեսուրսները,</p> <p>11) տեղեկություններ է հավաքում ապրանքների ներմուծման և արտահանման համար ընտանիքի</p>

		անդամներից մեկի կողմից մաքսային վճարներ կատարած լինելու վերաբերյալ:
<b>80.</b>	<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել սոցիալական ապահովության ոլորտում գործող տեղեկատվական համակարգերի փոխադարձ կապերը, տեղեկատվության փոխանակման ուղիները և շահագործման հետ կապված հիմնախնդիրները
<b>81.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) թվարկում է այն ներքին տեղեկատվական համակարգերը, որոնցից տվյալներ են ստացվում ընտանիքի սոցիալական կարիքը գնահատելու համար,</li> <li>2) թվարկում է այն ներքին տեղեկատվական համակարգերը, որոնցից տվյալներ են ստացվում գործազուրկի կարգավիճակ տրամադրելու համար,</li> <li>3) թվարկում է տվյալների փոխանակման եղանակները,</li> <li>4) ճիշտ է ներկայացնում տեղեկատվական համակարգերի շահագործման հետ կապված հիմնախնդիրները:</li> </ol>
<b>82.</b>	<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ուսումնասիրել սոցիալական պաշտպանության համակարգում ներդրված պաշտոնական կայքերը, տեղեկատվական հարթակները, թվային գործիքները և դրանք կիրառել մասնագիտական գործունեության ընթացքում
<b>83.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) գործող պաշտոնական կայքերից տեղեկատվություն է ստանում իրավական ակտերի, իրականացվող և նոր ներդրվող ծրագրերի վերաբերյալ,</li> <li>2) անձին աջակցում է դիմում մուտքագրել էլեկտրոնային տեղեկատվական հարթակների միջոցով և հետևել դիմումի ընթացքին,</li> <li>3) աշխատանք փնտրող անձին տրամադրում է խորհրդատվություն, ինչպես փնտրել աշխատանք ԵԱՏՄ երկրներում,</li> <li>4) աշխատանք փնտրող անձին տեղեկատվություն է տրամադրում աշխատանք փնտրելու կարողությունները զարգացնող առցանց ռեսուրսների մասին,</li> <li>5) անձին խորհրդատվություն է տրամադրում կուտակային կենսաթոշակային համակարգի միջոցով իր հաշիվներին հետևելու վերաբերյալ,</li> <li>6) կենսաթոշակի համար դիմած անձին աջակցում է առցանց գործիքի միջոցով հաշվել կենսաթոշակը,</li> <li>7) ավանդատուին աջակցում է առցանց գործիքի միջոցով հաշվել ավանդի չափը,</li> <li>8) նպաստի համար դիմած անձին աջակցում է առցանց գործիքի միջոցով հաշվել անապահովության գնահատման միավորը և նպաստի չափը,</li> <li>9) անձին տեղեկատվություն է տրամադրում իրավիճակային ծրագրերում ընդգրկվելու առցանց</li> </ol>

		հնարավորությունների վերաբերյալ:
<b>84.</b>	<b>Ուսումնառության արդյունք 5</b>	Ներկայացնել սոցիալական պաշտպանության համակարգում էլեկտրոնային կառավարման համակարգի աշխատանքի սկզբունքները
<b>85.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է ներկայացնում էլեկտրոնային կառավարման սխեման և կառուցվածքը՝ ըստ հորիզոնական կապերի և ուղղահայաց ենթակայության, 2) ճիշտ է ներկայացնում էլեկտրոնային կառավարման նպատակը և խնդիրները, 3) ճիշտ է ներկայացնում էլեկտրոնային կառավարման համակարգի հիմնական ուղղությունները՝ պետություն-պետություն, պետություն-քաղաքացի կամ քաղաքացի – պետություն, պետություն-բիզնես կամ բիզնես-պետություն:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ « ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ»</b>		
<b>86.</b>	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-008
<b>87.</b>	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողների մոտ ձևավորել համապատասխան գիտելիքներ և դրանց կիրառման կարողություններ սոցիալական պաշտպանության համակարգի, սոցիալական ծառայությունների, սոցիալական ապահովության ոլորտում իրականացվող պետական ծրագրերի, սոցիալական աշխատանքի ուղղությունների և մոդելների վերաբերյալ:
<b>88.</b>	<b>Մոդուլի տևողությունը</b>	90 ժամ
<b>89.</b>	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՍԱՍՍ-5-22-001 «Սոցիալական աշխատանքի հիմունքները», ՍԱՍՍ-5-22-006 «Սոցիալ-վարչարարական գործառույթների իրականացումը», ՍԱՍՍ-5-22-007 «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մասնագիտական գործունեության ոլորտում» մոդուլները:
<b>90.</b>	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>91.</b>	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել սոցիալական պաշտպանության համակարգի կառուցվածքը
<b>92.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է նկարագրում սոցիալական պաշտպանության համակարգի կառուցվածքը և ենթակառուցվածքները, 2) սահմանում է սոցիալական ապահովության ոլորտում ՀՀ կառավարության լիազորությունները համաձայն օրենսդրության, 3) ներկայացնում է ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը համաձայն օրենսդրության,

		<p>4) ներկայացնում է համայնքային սոցիալական ծառայությունների համակարգը համաձայն օրենսդրության,</p> <p>5) ներկայացնում է պետական և ոչ պետական սոցիալական ծառայությունների համակարգը և համագործակցության մեխանիզմները համաձայն օրենսդրության,</p> <p>6) սահմանում է «աջակցող ցանց» եզրույթը և ներկայացնում սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացում այդ համակարգի դերը համաձայն օրենսդրության:</p>
<b>93.</b>	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել հիմնական սոցիալական ծառայություններն ու տրամադրման մեխանիզմները, սոցիալական ապահովության ոլորտում իրականացվող պետական ծրագրերը
<b>94.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) առանձնացնում է օրենքով սահմանված հիմնական սոցիալական ծառայությունները,</p> <p>2) դասակարգում է սոցիալական ծառայություններն ըստ տրամադրման գործընթացի կազմակերպման մեխանիզմների համաձայն օրենսդրության,</p> <p>3) դասակարգում է սոցիալական ծառայություններն ըստ բնույթի համաձայն օրենսդրության,</p> <p>4) նկարագրում է հիմնական սոցիալական ծառայությունների տրամադրման գործընթացը համաձայն օրենսդրության,</p> <p>5) ներկայացնում է վերականգնողական օգնությունը և դրա տրամադրման ուղղություններն ու ձևերը, համաձայն օրենսդրության,</p> <p>6) ներկայացնում է խնամքը և դրա տրամադրման ուղղություններն ու ձևերը համաձայն օրենսդրության,</p> <p>7) ներկայացնում է օրենսդրությամբ սահմանված սոցիալական երաշխիքները,</p> <p>8) ներկայացնում է սոցիալական ապահովության ոլորտում իրականացվող պետական ծրագրերն, ըստ ոլորտների:</p>
<b>95.</b>	<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել սոցիալական աշխատանքի հիմնական ուղղությունները
<b>96.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ճիշտ է ներկայացնում սոցիալական պաշտպանության համակարգի առանձնահատկությունները, պետական և տարածքային կառավարման, տեղական ինքնակառավարման և ոչ պետական այլ հաստատություններում սոցիալական աշխատանքի հիմնական ծառայությունները,</p> <p>2) ճիշտ է ներկայացնում առողջապահության ոլորտում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները և հիմնական ծառայությունները,</p> <p>3) ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները հոգեկան առողջության ոլորտում և հիմնական ծառայությունները,</p>

		<p>4) ճիշտ է ներկայացնում կրթության ոլորտում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները և հիմնական ծառայությունները,</p> <p>5) ճիշտ է ներկայացնում հատուկ տիպի կրթադաստիարակչական հաստատություններում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները և հիմնական ծառայությունները, ճիշտ է ներկայացնում սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները մեծահասակների կրթության կազմակերպման հարցում:</p>
97.	<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Կիրառել սոցիալական աշխատանքի հիմնական մոդելներն՝ ըստ առաջադրված իրավիճակի
98.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում է պրակտիկ սոցիալական աշխատանքում կիրառվող հիմնական մոդելները,</p> <p>2) նկարագրում է հոգեւոցիալական մոդելի տեխնիկաները և կիրառում՝ ըստ առաջադրված իրավիճակի,</p> <p>3) նկարագրում է խնդրակենտրոն մոդելի տեխնիկաները և կիրառում՝ ըստ առաջադրված իրավիճակի,</p> <p>4) նկարագրում է ճգնաժամային մոդելի տեխնիկաները և կիրառում՝ ըստ առաջադրված իրավիճակի,</p> <p>5) նկարագրում է էկո-համակարգային մոդելի տեխնիկաները և կիրառում՝ ըստ առաջադրված իրավիճակի,</p> <p>6) նկարագրում է կյանքի մոդելի տեխնիկաները և կիրառում՝ ըստ առաջադրված իրավիճակի,</p> <p>7) նկարագրում է ընտանիքի ուժեղացման մոդելի տեխնիկաները և կիրառում՝ ըստ առաջադրված իրավիճակի:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՏՆԱՅՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ»</b>		
99.	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-009
100.	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ զարգացնել սոցիալական դեպքի վարման գործընթացում տնայցի կազմակերպման կարողություններ:
101.	<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
102.	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՍԱՍԱ-5-22-008 «Սոցիալական պաշտպանության համակարգը և ծառայությունների դասակարգումը» մոդուլը:
103.	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
104.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել տնայցի կազմակերպման գործընթացը և հիմնական փուլերը
105.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) նկարագրում է տնայցի պլանավորման, գործի տվյալների հավաքագրման, տնայցի իրականացման փուլերի գործընթացը՝ համաձայն առաջադրված իրավիճակների,



		<p>2) ճիշտ է դասակարգում տնայցն ըստ բարդության, հրատապության և հասցեների՝ համաձայն առաջադրված իրավիճակների,</p> <p>3) ընտրում է տնայցի ձևաչափը՝ միայնակ կամ հանձնաժողովի կազմով՝ ըստ առաջադրված իրավիճակի,</p> <p>4) ճիշտ է նկարագրում տնայցի արդյունքների ամփոփման գործընթացը:</p>
<b>106.</b>	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կազմակերպել տնայցի գործընթացը սովորական և ահազանգի հիման վրա բացված դեպքերում
<b>107.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) դասակարգում է դեպքերն՝ ըստ առաջադրված իրավիճակի,</p> <p>2) ճիշտ է նկարագրում սոցիալական աջակցության կարիք ունեցող անձի բացահայտման և ահազանգի հիման վրա տնայցի կազմակերպման գործընթացի առանձնահատկությունները՝ համաձայն առաջադրված իրավիճակի,</p> <p>3) կազմակերպում է տնայց՝ համաձայն առաջադրված իրավիճակի և ամփոփում արդյունքը:</p>
<b>ՄՈՂՈՎԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ»</b>		
<b>108.</b>	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-010
<b>109.</b>	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ զարգացնել անձի (ընտանիքի, սոցիալական այլ խմբի) սոցիալական կարիքների գնահատման կարողություններ:
<b>110.</b>	<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
<b>111.</b>	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՍԱՍՍ-5-22-002 «Հոգեբանական մեթոդների կիրառումը սոցիալական աշխատանքում», ՍԱՍՍ-5-22-003 «Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը սոցիալական աշխատանքում», ՍԱՍՍ-5-22-009 «Տնայցի կազմակերպումը» մոդուլները:
<b>112.</b>	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>113.</b>	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել սոցիալական կարիքի գնահատման հիմնական խնդիրները
<b>114.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) բացահայտում է սոցիալ-տնտեսական կարիքը՝ իրավիճակից ելնելով,</p> <p>2) բացահայտում է սոցիալ-հոգեբանական կարիքը՝ իրավիճակից ելնելով,</p> <p>3) բացահայտում է սոցիալ-մանկավարժական կարիքը՝ իրավիճակից ելնելով,</p> <p>4) բացահայտում է սոցիալ-բժշկական կարիքը՝ իրավիճակից ելնելով,</p> <p>5) բացահայտում է սոցիալ-աշխատանքային կարիքը՝ իրավիճակից ելնելով,</p>

		6) բացահայտում է սոցիալ-իրավական կարիքը՝ իրավիճակից ելնելով, 7) բացահայտում է կենսապայմանների հետ կապված խնդիրները (առկայություն, կամ բացակայություն, կամ սպառնալիք)՝ առաջադրված իրավիճակի պայմաններում:
115.	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Նկարագրել կարիքի գնահատման գործընթացը և կիրառել հիմնական մեթոդները
116.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է նկարագրում անձի (ընտանիքի, սոցիալական այլ խմբի) կարիքի գնահատման հիմնական փուլերը, 2) մեկնաբանում է կարիքի գնահատման նախապատրաստական, իրականացման, «ավարտման» փուլերն՝ առաջադրված իրավիճակներից ելնելով, 3) ճիշտ է կիրառում դիտարկման մեթոդը՝ համաձայն իրավիճակի, 4) ճիշտ է կիրառում հարցազրույցի մեթոդը՝ համաձայն իրավիճակի:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԵՊՔԻ ՎԱՐՈՒՄԸ»</b>		
117.	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-011
118.	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ զարգացնել սոցիալական դեպքի վարման գործընթացում ներգրավվածության և դեպք վարողի կարողություններ:
119.	<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
120.	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՍԱՍԱ-5-22-010 «Սոցիալական կարիքների գնահատումը» մոդուլը:
121.	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
122.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել սոցիալական դեպքի վարման գործընթացը և փուլերը
123.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) սահմանում է «սոցիալական դեպք» և «սոցիալական դեպքի վարում» եզրույթները համաձայն օրենսդրության, 2) ճիշտ է ներկայացնում սոցիալական դեպքի վարման գործընթացն ըստ փուլերի:
124.	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Կազմել անհատական սոցիալական ծրագիր
125.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է անհատական սոցիալական ծրագրի կազմման գործընթացը համաձայն առաջադրված իրավիճակում ընտանիքի (ընտանիքի որևէ անդամի) գնահատված սոցիալական կարիքների, 2) առաջարկում է գնահատված կարիքները բավարարելու համար սոցիալական ծառայությունների նկարագիր՝ համաձայն առաջադրված իրավիճակի,

		3) իրականացնում է անհատական սոցիալական ծրագրի փակման կամ այլ կազմակերպությանը փախանցման գործողություններ:
126.	<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել սոցիալական ուղեկցման կամ մոնիթորինգի գործընթացը
127.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է սոցիալական ուղեկցման կամ մոնիթորինգի գործընթացը համաձայն առաջադրված իրավիճակում ընտանիքի (ընտանիքի որևէ անդամի) անհատական սոցիալական ծրագրի, 2) ներկայացնում է ուղեկցման հնարավոր ռեսուրսներն ըստ առաջադրված իրավիճակի, 3) ներկայացնում է սոցիալական ծրագրում ներառված միջոցառումների ընթացիկ մոնիթորինգի մեխանիզմներ՝ համաձայն առաջադրված իրավիճակի:
128.	<b>Ուսումնառության արդյունք 4</b>	Ներկայացնել ծառայություն մատուցող կազմակերպությունների և աջակցող ցանցի հետ գործընթացի մեխանիզմները
129.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ճիշտ է գնահատում ծառայություն մատուցող կազմակերպությունների և աջակցող ցանցի ներգրավման անհրաժեշտությունն՝ ըստ առաջադրված անհատական սոցիալական ծրագրի, 2) ճիշտ է ներկայացնում է ֆորմալ և ոչ ֆորմալ աջակցող ցանցերի առանձնահատկությունները:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ»</b>		
130.	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-012
131.	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ձևավորել գիտելիքներ հաշմանդամություն ունեցող անձանց հետ սոցիալական աշխատանքի մասին և դրանք կիրառել հաշմանդամների սոցիալական ներառման, սոցիալական պաշտպանության և սոցիալական աջակցության հիմնական ծառայությունների մատուցման ընթացքում:
132.	<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ
133.	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՍԱՍՍ-5-22-001 «Սոցիալական աշխատանքի հիմունքները», ՍԱՍՍ-5-22-002 «Հոգեբանական մեթոդների կիրառումը սոցիալական աշխատանքում», ՍԱՍՍ-5-22-003 «Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը սոցիալական աշխատանքում», ՍԱՍՍ-5-22-005 «Սոցիալական աշխատանքի բարեվարքության կանոնների կիրառումը», ՍԱՍՍ-5-22-006 «Սոցիալ-վարչարարական գործառույթների իրականացումը», ՍԱՍՍ-5-22-007 «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մասնագիտական գործունեության ոլորտում» մոդուլները:
134.	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

135.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել «հաշմանդամություն» երևույթը և հաշմանդամություն ունեցող անձանց հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները
136.	<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) նկարագրում է «հաշմանդամություն» երևույթը,</li> <li>2) սահմանում է «հաշմանդամություն ունեցող անձ» հասկացությունը,</li> <li>3) նկարագրում և մեկնաբանում է հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները,</li> <li>4) նկարագրում և մեկնաբանում է հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերը և խտրականության դրսևորումները,</li> <li>5) նկարագրում է հաշմանդամության գոյություն ունեցող մոդելները,</li> <li>6) սահմանում է անձի ֆունկցիոնալության գնահատում հասկացությունը և նկարագրում ֆունկցիոնալության գնահատման համակարգը,</li> <li>7) մեկնաբանում է հասարակական և բարեգործական կազմակերպությունների դերը հաշմանդամություն ունեցող անձանց խնդիրների լուծման գործում:</li> </ol>
137.	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական խնդիրները և կիրառել դրանց լուծմանն ուղղված գործնական քայլերը
138.	<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման, սոցիալական պաշտպանության և սոցիալական աշխատանքի իրավական հիմքերը,</li> <li>2) ներկայացնում և մեկնաբանում է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման համալիր և տարեկան ծրագրերը,</li> <li>3) ներկայացնում է հաշմանդամություն ունեցող անձանց ծառայությունների անհատական ծրագիրը, նկարագրում նրանում ներառված միջոցառումների իրականացմանն ուղղությունները, և ծրագրի իրականացմանն ուղղված գործնական քայլերը,</li> <li>4) ներկայացնում է հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ապահովմանն ուղղված պետական ծրագրերը և դրանց իրականացմանն ուղղված գործնական քայլերը,</li> <li>5) ներկայացնում է հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական օգնության և սպասարկման ոլորտում սահմանված պետական երաշխիքները և դրանց իրացմանն ուղղված գործնական քայլերը,</li> <li>6) ներկայացնում է հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության ոլորտում սահմանված պետական երաշխիքները և դրանց իրացմանն ուղղված գործնական քայլերը,</li> </ol>

		<p>7) ներկայացնում է մատչելիության դերը՝ որպես հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման ու պաշտպանության և սոցիալական ներառման նախապայման և նկարագրում մատչելիության տեսակները,</p> <p>8) իրականացնում է հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի և համայնքում ներառվելու իրավունքի իրացմանն ուղղված քայլեր,</p> <p>9) ներկայացնում և մեկնաբանում՝ հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատող բազմամասնագիտական թիմի աշխատանքներին սոցիալական աշխատողի մասնակցության ձևերը:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԵՏ»</b>		
<b>139.</b>	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-013
<b>140.</b>	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ երեխաների հետ սոցիալական աշխատանքի գործընթացի վերաբերյալ և ձևավորել գործնական կարողություններ, որոնք կկիրառվեն երեխաների սոցիալական պաշտպանության և սոցիալական աջակցության հիմնական ծառայությունների մատուցման ընթացքում:
<b>141.</b>	<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ
<b>142.</b>	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՍԱՍՍ-5-22-001 «Սոցիալական աշխատանքի հիմունքները», ՍԱՍՍ-5-22-002 «Հոգեբանական մեթոդների կիրառումը սոցիալական աշխատանքում», ՍԱՍՍ-5-22-003 «Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը սոցիալական աշխատանքում», ՍԱՍՍ-5-22-005 «Սոցիալական աշխատանքի բարեվարքության կանոնների կիրառումը», ՍԱՍՍ-5-22-006 «Սոցիալ-վարչարարական գործառույթների իրականացումը», ՍԱՍՍ-5-22-007 «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մասնագիտական գործունեության ոլորտում» մոդուլները:
<b>143.</b>	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>144.</b>	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել երեխաների հետ սոցիալական աշխատանքի մշակութային, պատմական, գիտական հիմքերը և առանձնահատկությունները
<b>145.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում է մանկության խնդիրների մշակութային, պատմական իրողությունը,</p> <p>2) տիրապետում է մանկության մասին սոցիալ-հոգեբանական, մանկավարժական տեսական գիտելիքներին,</p> <p>3) ներկայացնում է երեխայի սոցիալ-հոգեբանական զարգացման փուլերի առանձնահատկությունները,</p>

		<p>4) ներկայացնում է զարգացման տվյալ փուլին բնորոշ պահանջմունքները,</p> <p>5) սահմանում է սոցիալական զարգացում հասկացողությունը,</p> <p>6) ներկայացնում է երեխաների հետ սոցիալական աշխատանքի ուղղությունները:</p>
146.	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել հատուկ պաշտպանության կարիք ունեցող երեխաների խմբերը, նրանց սոցիալական խնդիրները և կատարել սոցիալական աշխատանքի միջամտություններ
147.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում և մեկնաբանում է երեխաների սոցիալական հիմնախնդիրները,</p> <p>2) սահմանում է «հատուկ պաշտպանության կարիք» հասկացությունը,</p> <p>3) մեկնաբանում է երեխայի լավագույն շահ» հասկացությունը,</p> <p>4) թվարկում և մեկնաբանում է հատուկ պաշտպանության կարիք ունեցող խմբերը՝ ըստ կարիքի և ռիսկայնության աստիճանի,</p> <p>5) բնութագրում է ռիսկայնության և կարիքավորության առանձին վիճակները և պահանջմունքները,</p> <p>6) նկարագրում է երեխաների կարիքների գնահատման գործընթացը,</p> <p>7) կարողանում է հավաքել տեղեկություններ երեխայից և գնահատել դրա ճշմարտացիությունը,</p> <p>8) նկարագրում է միջամտության փուլերը և ձևերը:</p>
148.	<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Ներկայացնել երեխաների պաշտպանության հիմնական ծառայությունները և երեխայի պաշտպանության համակարգում ներառված կառույցները
149.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) թվարկում և մեկնաբանում է երեխաների սոցիալական պաշտպանության հիմնական ծառայությունները,</p> <p>2) թվարկում և մեկնաբանում է երեխաների սոցիալական աջակցության ծառայությունները,</p> <p>3) ներկայացնում և մեկնաբանում է կարիքի կամ ռիսկի բնույթին համապատասխան ծառայությունը կամ ծառայությունների խումբը,</p> <p>4) նկարագրում է երեխայի պաշտպանությունն իրականացնող տեղական, մարզային և հանարապետական մակարդակները,</p> <p>5) թվարկում է երեխայի պաշտպանության համակարգում ներառված կառույցները և մեկնաբանում նրանց դերը,</p> <p>6) մեկնաբանում է հասարակական և բարեգործական կազմակերպությունների դերը երեխաների սոցիալական հիմնախնդիրների լուծման գործում:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ՏԱՐԵՑՆԵՐԻ ՀԵՏ»</b>		

150.	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-014
151.	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ձևավորել գիտելիքներ տարեցների հետ սոցիալական աշխատանքի մասին և դրանք կիրառել տարեցներին սոցիալական պաշտպանություն և սոցիալական աջակցություն ծառայությունների մատուցման ընթացքում:
152.	<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
153.	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՍԱՍՍ-5-22-001 «Սոցիալական աշխատանքի հիմունքները», ՍԱՍՍ-5-22-002 «Հոգեբանական մեթոդների կիրառումը սոցիալական աշխատանքում», ՍԱՍՍ-5-22-003 «Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը սոցիալական աշխատանքում», ՍԱՍՍ-5-22-005 «Սոցիալական աշխատանքի բարեվարքության կանոնների կիրառումը», ՍԱՍՍ-5-22-006 «Սոցիալ-վարչարարական գործառույթների իրականացումը», ՍԱՍՍ-5-22-007 «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մասնագիտական գործունեության ոլորտում» մոդուլները:
154.	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
155.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել տարեցների հետ աշխատանքի առանձնահատկությունները և այդ տարիքային խումբը ներկայացնող տեսությունները
156.	<b>Կատարման չափանիշներ</b>	<ol style="list-style-type: none"> <li>1) ներկայացնում է տարեցների հետ սոցիալական աշխատանքի իրավական հիմքերը,</li> <li>2) սահմանում է տարեց հասկացությունը և ներկայացնում տարիքային սահմանները,</li> <li>3) ներկայացնում և մեկնաբանում է տարեց մարդկանց նկատմամբ գոյություն ունեցող կարծրատիպերը և խտրականության դրսևորումները,</li> <li>4) ներկայացնում է տարեց հասակը մեկնաբանող սոցիալական տեսությունները,</li> <li>5) մեկնաբանում է տարեցների սոցիալական կարևորությունը հասարակությունում,</li> <li>6) ներկայացնում է տարեցների հետ սոցիալական աշխատանքի պատմական զարգացումը,</li> <li>7) նկարագրում է տարեցների նկատմամբ իրականացվող ժամանակակից սոցիալական քաղաքականության ձեռքբերումները:</li> </ol>
157.	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել տարեցների սոցիալական խնդիրները և կատարել սոցիալական աշխատանքի միջամտություն
158.	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է տարեցների հետ սոցիալական աշխատանքի նպատակները և սկզբունքները,

		<p>2) ներկայացնում է տարեցների հետ տարվող սոցիալական աշխատանքի ձևերը,</p> <p>3) կարողանում է բացահայտել, առանձնացնել և ներկայացնել տարեցների հետ սոցիալական աշխատանքում առաջացող խնդիրները,</p> <p>4) կատարում է ճիշտ միջամտություն ուղղված տարեց մարդկանց մոտ առաջացող խնդիրների լուծմանը (աղքատություն, առողջապահական խնդիրներ, ընտանեկան կոնֆլիկտներ, սոցիալական սպասարկման և խնամքի կարիք),</p> <p>5) նկարագրում է հաստատություններում տարեցների հետ սոցիալական աշխատանքի կազմակերպման ձևերը,</p> <p>6) նկարագրում է տարեցներին տնային խնամքի ծառայությունների մատուցումը,</p> <p>7) ներկայացնում է տարեցներին սոցիալական սպասարկման և խնամքի ժամանակակից այլընտրանքային ծառայությունների մատուցումը,</p> <p>8) մեկնաբանում է հկ-ների և այլ կազմակերպությունների կողմից տարեցներին մատուցվող ծառայությունների և ծրագրերի կարևորությունը:</p>
--	--	--

**ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՇԽԱՏԱՆՔ ՓՆՏՐՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ»**

<b>159.</b>	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-015
<b>160.</b>	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ և զարգացնել կարողություններ աշխատանք փնտրողներին, այդ թվում գործազուրկներին և գործատուներին սոցիալական ծառայությունների մատուցման վերաբերյալ:
<b>161.</b>	<b>Մոդուլի տևողությունը</b>	72 ժամ
<b>162.</b>	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՍԱՍՍ-5-22-001 «Սոցիալական աշխատանքի հիմունքները», ՍԱՍՍ-5-22-002 «Հոգեբանական մեթոդների կիրառումը սոցիալական աշխատանքում», ՍԱՍՍ-5-22-003 «Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը սոցիալական աշխատանքում», ՍԱՍՍ-5-22-005 «Սոցիալական աշխատանքի բարեվարքության կանոնների կիրառումը», ՍԱՍՍ-5-22-006 «Սոցիալ-վարչարարական գործառույթների իրականացումը», ՍԱՍՍ-5-22-007 «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մասնագիտական գործունեության ոլորտում» մոդուլները:
<b>163.</b>	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:



164.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել «գործազուրկ» և «զբաղված» հասկացությունները և աշխատանք փնտրող (գործազուրկ) անձանց հետ տարվող աշխատանքի առանձնահատկությունները
165.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) սահմանում է «գործազուրկ», «զբաղված» և «աշխատաշուկա» հասկացությունները,</p> <p>2) ներկայացնում և մեկնաբանում է աշխատանք փնտրող անձի հաշվառման (հաշվառումից հանման), գործազուրկի կարգավիճակի տրամադրման (կասեցման, դադարեցման) ընթացակարգը,</p> <p>3) թվարկում և մեկնաբանում է աշխատանք փնտրող անձին գործազուրկի կարգավիճակի տրամադրման, կասեցման և դադարեցման հիմքերը,</p> <p>4) սահմանում է «հարմար աշխատանք» հասկացությունը,</p> <p>5) ներկայացնում և մեկնաբանում է գործազուրկի կարգավիճակ ունեցող անձի՝ աշխատաշուկայում անմրցունակության որոշարկման ընթացակարգը,</p> <p>6) նկարագրում է աշխատանք փնտրող անձի զբաղվածության ապահովման անհատական ծրագիրը և մեկնաբանում «աջակցության թիրախներ» հասկացությունը:</p>
166.	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել աշխատանք փնտրող անձանց (գործազուրկ) հիմնախնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործնական քայլերը
167.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) թվարկում է աշխատաշուկայում անմրցունակ անձանց խմբերը,</p> <p>2) ներկայացնում և հիմնավորում է գործազուրկ անձանց հմտությունների և կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերի դերը և կարևորությունը,</p> <p>3) ներկայացնում և հիմնավորում է կայուն զբաղվածություն ապահովող ծրագրերի դերը և անհրաժեշտությունը,</p> <p>4) ներկայացնում և հիմնավորում է ժամանակավոր զբաղվածություն ապահովող ծրագրերի դերը մարզերում սոցիալական լարվածությունը մեղմելու գործում,</p> <p>5) նկարագրում է աշխատաշուկայում անմրցունակ անձանց խմբերի (երկարաժամկետ գործազուրկ, երիտասարդ, հաշմանդամություն ունեցող անձ, միգրանտ, ժամկետային պարտադիր զինվորական ծառայությունից վերադարձած, թրաֆիկինգի զոհ, փախստական և այլն) հիմնախնդիրները և ներկայացնում լուծումներ,</p> <p>6) նկարագրում է մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվող անձանց հիմնախնդիրները և ներկայացնում լուծումումներ,</p>

		7) նկարագրում է գործազուրկի կարգավիճակ ունեցող անձին զբաղվածության ծրագրերում ընդգրկելու գործընթացը, 8) ներկայացնում է թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու աղբյուրները:
<b>168.</b>	<b>Ուսումնառության արդյունք 3</b>	Աջակցել աշխատանք փնտրող անձանց (գործազուրկ) աշխատանք գտնելու հարցում
<b>169.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	1) ներկայացնում է գործատուների հետ համագործակցության նպատակը և սկզբունքները, 2) ներկայացնում է գործատուի հետ համագործակցության մեթոդները և ընթացակարգը, 3) ներկայացնում է աշխատուժի պահանջարկի և առաջարկի համապատասխանեցման ընթացակարգը և կիրառում ըստ առաջադրված իրավիճակի, 4) ներկայացնում և մեկնաբանում է օտարերկրացի աշխատողի համար աշխատանքի թույլտվության ստանալու ընթացակարգը, 5) նկարագրում է գործատուների շրջանում ուսումնասիրություն անցկացնելու մեթոդները:
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԵՏ»</b>		
<b>170.</b>	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-016
<b>171.</b>	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողներին տալ գիտելիքներ ընտանքի հետ սոցիալական աշխատանքի գործընթացի վերաբերյալ և սոցիալական պաշտպանության և սոցիալական աջակցության ծառայությունների մատուցման ընթացքում դրանք կիրառելու գործնական հմտություններ:
<b>172.</b>	<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
<b>173.</b>	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՍԱՍՍ-5-22-001 «Սոցիալական աշխատանքի հիմունքները», ՍԱՍՍ-5-22-002 «Հոգեբանական մեթոդների կիրառումը սոցիալական աշխատանքում», ՍԱՍՍ-5-22-003 «Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը սոցիալական աշխատանքում», ՍԱՍՍ-5-22-005 «Սոցիալական աշխատանքի բարեվարքության կանոնների կիրառումը», ՍԱՍՍ-5-22-006 «Սոցիալ-վարչարարական գործառույթների իրականացումը», ՍԱՍՍ-5-22-007 «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մասնագիտական գործունեության ոլորտում» մոդուլները:
<b>174.</b>	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
<b>175.</b>	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել ընտանիքի հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները
<b>176.</b>	<b>Կատարման չափանիշներ</b>	1) սահմանում է «ընտանիք» հասկացությունը, նկարագրում ընտանիքի կառուցվածքը և ֆունկցիաները

		<p>2) նկարագրում է ընտանիքի դերը, բնութագրում ընտանիքների տարբեր տիպերին բնորոշ վարքը,</p> <p>3) նկարագրում և մեկնաբանում է ընտանքի վարքի կանոնները, փոփոխություններին հարմարվելու ուղիները, ծեսերը, գաղտնիքները, արգելված թեմաներն ու տաբուները,</p> <p>4) նկարագրում և մեկնաբանում է ավանդական և ժամանակակից ընտանքի փոխակերպումները,</p> <p>5) ներկայացնում և մեկնաբանում է ընտանեկան կյանքի փուլերն ու ճգնաժամերը,</p> <p>6) նկարագրում է ընտանեկան համակարգերն ու ենթահամակարգերը,</p> <p>7) ներկայացնում է ընտանիքի ներքին և արտաքին փոխհարաբերությունները,</p> <p>8) կազմում և ներկայացնում է ընտանքի սոցիալական պատմությունը,</p> <p>9) ճանաչում և բնութագրում է ոչ լիարժեք և սոցիալապես անապահով ընտանիքներին,</p> <p>10) մեկնաբանում է ընտանիքների հետ աշխատելիս գաղտնիության պահպանման կարևորությունը:</p>
177.	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	Ներկայացնել ընտանիքի սոցիալական հիմնախնդիրները և կատարել դրանց լուծմանն ուղղված գործնական քայլեր
178.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում և մեկնաբանում է ընտանիքի սոցիալական ռիսկերը, նկարագրում ռիսկերի ազդեցությունը,</p> <p>2) սահմանում է ընտանիքին սոցիալական աջակցության տրամադրման նպատակն ու խնդիրները,</p> <p>3) գնահատում և նկարագրում է ընտանիքի սոցիալական խնդիրներն ու կարիքները,</p> <p>4) ճիշտ է թվարկում է սոցիալական պաշտպանության հիմնական ծառայությունները,</p> <p>5) թվարկում և նկարագրում է ընտանեկան աջակցության հիմնական տեսակները (զարգացնող, կոմպենսացնող, պաշտպանող ընտանեկան աջակցություններ),</p> <p>6) ներկայացնում է ընտանիքի կարիքներին համապատասխան աջակցության կազմակերպման փուլերը և նկարագրում գործնական քայլերը,</p> <p>7) առաջարկում է ընտանիքի կարիքին կամ ռիսկի բնույթին համապատասխան ծառայությունը կամ ծառայությունների խումբը:</p>
<b>ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԱՅԼ ԽՄԲԵՐԻ ՀԵՏ»</b>		
179.	<b>Մոդուլի դասիչը</b>	ՍԱՍՍ-5-22-017
180.	<b>Մոդուլի նպատակը</b>	Մոդուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել համապատասխան գիտելիքներ և դրանց կիրառման

		կարողություններ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց այլ խմբերին սոցիալական աջակցության տրամադրման և այդ իրավունքի իրացման գործընթացների վերաբերյալ:
181.	<b>Մոդուլի տևողությունը</b>	54 ժամ
182.	<b>Մուտքային պահանջները</b>	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է ուսումնասիրած լինի ՍԱՍՍ-5-22-001 «Սոցիալական աշխատանքի հիմունքները», ՍԱՍՍ-5-22-002 «Հոգեբանական մեթոդների կիրառումը սոցիալական աշխատանքում», ՍԱՍՍ-5-22-003 «Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը սոցիալական աշխատանքում», ՍԱՍՍ-5-22-005 «Սոցիալական աշխատանքի բարեվարքության կանոնների կիրառումը», ՍԱՍՍ-5-22-006 «Սոցիալ-վարչարարական գործառույթների իրականացումը», ՍԱՍՍ-5-22-007 «Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մասնագիտական գործունեության ոլորտում» մոդուլները:
183.	<b>Մոդուլի գնահատման կարգը</b>	Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար նախատեսված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:
184.	<b>Ուսումնառության արդյունք 1</b>	Ներկայացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց այլ խմբերը և նրանց հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները
185.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) թվարկում և նկարագրում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց այլ խմբերը (բռնության և շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված անձ, ազատագրկման վայրերում գտնվող, պրոբացիայի շահառու, ազատագրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառող հիմնարկներից վերադառած, արտահիվանդանոցային նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում հաշվառված, արտակարգ իրավիճակում հայտնված և այլն),</p> <p>2) ներկայացնում է բռնության և շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված անձանց հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները,</p> <p>3) ներկայացնում է ազատագրկման վայրերում գտնվող անձանց հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները,</p> <p>4) ներկայացնում է պրոբացիայի շահառուների հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները,</p> <p>5) ներկայացնում է ազատագրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառող հիմնարկներից վերադառած անձանց հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները,</p> <p>6) ներկայացնում է արտահիվանդանոցային նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական</p>

		<p>հաստատություններում հաշվառված անձանց հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները,</p> <p>7) ներկայացնում է արտակարգ իրավիճակում (պատերազմ, բնական աղետ) հայտնված անձանց հետ սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները:</p>
186.	<b>Ուսումնառության արդյունք 2</b>	<p>Ներկայացնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց այլ խմբերի սոցիալական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործնական քայլերը</p>
187.	<b>Կատարման չափանիշներ</b>	<p>1) ներկայացնում է բռնության և շահագործման (թրաֆիկինգի) ենթարկված անձանց սոցիալական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործնական քայլերը,</p> <p>2) ներկայացնում է ազատագրկման վայրերում գտնվող անձանց սոցիալական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործնական քայլերը,</p> <p>3) ներկայացնում է պրոբացիայի շահառուների սոցիալական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործնական քայլերը,</p> <p>4) ներկայացնում է ազատագրկման վայրերից կամ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառող հիմնարկներից վերադառած անձանց սոցիալական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործնական քայլերը,</p> <p>5) ներկայացնում է արտահիվանդանոցային նարկոլոգիական ծառայություններ մատուցող բժշկական հաստատություններում հաշվառված անձանց սոցիալական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված գործնական քայլերը,</p> <p>6) ներկայացնում է արտակարգ իրավիճակում (պատերազմ, բնական աղետ և այլն) հայտնված անձանց սոցիալական խնդիրները և և դրանց լուծմանն ուղղված գործնական քայլերը:</p>

**Միջին մասնագիտական կրթության 0923.02.5 «Սոցիալական աշխատանք» մասնագիտության  
0923.02.01.5 «Սոցիալական սպասարկող» որակավորման օրինակելի ուսումնական պլան**

N	Առարկայախմբեր, առարկաներ և մոդուլներ	Շաբաթների թիվը	Ուսանողի առավելագույն բեռնվածությունը, ժամ	Պարտադիր լսարանային պարապմունքներ, ժամ	Ուսուցման երաշխավորվող տարիներ
	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ</b>				
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		108	72	1
2.	Տնտեսագիտության հիմունքներ		81	54	2
3.	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		81	54	2
4.	Իրավունքի հիմունքներ		54	36	1
5.	Պատմություն		81	54	1
6.	Ռուսաց լեզու		108	72	1
7.	Օտար լեզու		108	72	1
8.	Ֆիզկուլտուրա		174	116	1,2
9.	Լանդշաֆտագիտության և էկոլոգիայի հիմունքներ		54	36	1
10.	Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		42	28	2
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>891</b>	<b>594</b>	
	<b>ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>				
1.	Հաղորդակցություն		81	54	1
2.	Անվտանգություն և առաջին օգնություն		54	36	1
3.	Աշխատանքային գործունեության ընդհանուր հմտություններ		54	36	1
4.	Համակարգչային օպերատորություն		81	54	1

5.	Ձեռներեցություն		108	72	2
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>378</b>	<b>252</b>	
	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>				
1.	Սոցիալական աշխատանքի հիմունքները		54	36	1
2.	Հոգեբանական մեթոդների կիրառումը սոցիալական աշխատանքում		108	72	1
3.	Սոցիալ-մանկավարժական տեխնոլոգիաների կիրառումը սոցիալական աշխատանքում		108	72	1
4.	Օրենսդրական ակտերի կիրառումը սոցիալական աշխատանքում		162	108	1
5.	Սոցիալական բարեվարքության կանոնների կիրառումը		81	54	1
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>513</b>	<b>342</b>	
	<b>ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>				
1.	Սոցիալ-վարչարարական գործառույթների իրականացումը		108	72	1
2.	Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը մասնագիտական գործունեության ոլորտում		162	108	1
3.	Սոցիալական պաշտպանության համակարգը և ծառայությունների դասակարգումը		135	90	2
4.	Տնայցի կազմակերպումը		81	54	2
5.	Սոցիալական կարիքների գնահատումը		81	54	2
6.	Սոցիալական դեպքի վարումը		81	54	2
7.	Սոցիալական աշխատանքի իրականացումը հաշմանդամություն ունեցող անձանց հետ		108	72	2
8.	Սոցիալական աշխատանքի իրականացումը երեխաների հետ		108	72	2
9.	Սոցիալական աշխատանքի իրականացումը տարեցների հետ		81	54	2
10.	Սոցիալական աշխատանքի իրականացումն աշխատանք փնտրող անձանց հետ		108	72	2
11.	Սոցիալական աշխատանքի իրականացումն ընտանիքի հետ		81	54	2

12.	Սոցիալական աշխատանքի իրականացումը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց այլ խմբերի հետ		81	54	2
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>1215</b>	<b>810</b>	
	<b>ԸՆՏՐՈՎԻ</b>		<b>81</b>	<b>54</b>	2
	<b>ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ</b>		<b>54</b>	<b>36</b>	1-2
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>58</b>	<b>3132</b>	<b>2088</b>	
	<b>ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ</b>		<b>200</b>		
	<b>ՊՐԱԿՏԻԿԱ</b>	<b>18</b>			
	<b>ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ</b>	<b>4</b>			
	<b>ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ</b>	<b>2</b>			
	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>82</b>			